



**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԳԻՏԱԵԹՈՐՈՍԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
ՀԻՄՆԱԴՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Գլխավոր խմբագիր՝ Կարինե Թորոսյան

ՆԱԽԱՇԱԿԻՂ

7.2011 Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո թ հ ո թ ղ

- Յուզրաշյան Յուրա - գ/դ, ՀՊՄՀ**
- Աստվածատրյան Սելանյա - գ/դ, ՀՊԼՀ**
- Գալստյան Աշոտ - գ/թ, ՀՊՄՀ**
- Արուսյակ Հովհաննիսյան - գ/թ, ՀՊՄՀ**
- Խաչատրյան Հեղինե - գ/թ, ՀՊՄՀ**
- Միտոյան Հասմիկ – ԿԳՆ հանրակրթության վարչության
ն/դ կրթության գլխավոր մասնագետ**
- Պետրոսյան Ալվարդ - ՅՈՒՆԻՍԵՖ**
- Ծառուկյան Ռուզաննա - «Քայլ առ քայլ» հիմնադրամ**
- Պետրոսյան Մարիամ – ԿԱԻ**
- Խաչատրյան Սերոբ - գ/թ, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամ**
- Քարամյան Ռուզաննա - Երևանի թ. 55 դպրոց**
- Ալավերդյան Անուշ - Երևանի թ. 51 դպրոց**
- Միմոնյան Գոհար – Երևանի թ. 4 դպրոց**
- Հովհաննիսյան Անահաիտ - Երևանի Աջափնյակ վարչական շրջանի
կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր
մասնագետ**

Հրատարակչական խմբագիր՝ Մարիամ Պետրոսյան

«Ն ա խ ա շ ա վ ի ղ» հ ա ն դ ե ս ի ա շ խ ա տ ա կ ա գ մ

Մմբատյան Լալա - համակարգող, ԿԱԻ
Ամիրբեկյան Գոհար - խմբագիր-սրբագրիչ, ԿԱԻ
Միրզաթունյան Աստղիկ - համակարգչային օպերատոր, ԿԱԻ
ՀԱՆՅԵՆ՝ ՏԻԳՐԱՆ ՄԵՏԻ 67, ՀԵՏ՝ 57-21-52, 57-21-40
ՀԱՆՁՆԱԾ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ՝ 25. 10. 2011: ԾՆՎԱԼԸ՝ 4 ՏՊ. ՃՆԱՌՒՂ: ՏՊԱՔԱՆԱԿԸ՝ 2310:
ԹՈՐՈՒԹ՝ ՕՅՆԵԹ: ՉՆՓԱԸ՝ 70X100 ¹/₁₆: ԳԻՆԸ՝ 840 ՊՐԱՐ:
ԴՊՐՈՇՆԱԵՐԻՆ ՏՐՎՈՒՄ Է ԵՆՎՃԱՐ
ԳՐԱՆՅԱՆՆ ԳՎԱՅՆՎԱՆ՝ 1004:
375111, 67 Tigran Metsi, Yerevan, Armenia. Phone 572152, 572140.
Printed 2310 samples.

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Գ. ՄԱՐՏՉՅԱՆ

Միասնացված ուսուցման արդյունավետությունը տարրական դասարաններում 3

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բաց առաջադրանքը՝ որպես տարրական մաթեմատիկական կրթության բովանդակության բաղադրիչ..... 8

Ն. ԽՈՐԵԱԿՅԱՆ

Ղաղեկի ժամի կազմակերպումը տարրական դասարաններում 14

ԳՊՐՈՑԻ ՀԵՄԵՆ

Լ. ՄԱՐՏՉՅԱՆ

4-5 տարեկան երեխաների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը..... 23

Գ. ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆ

Երևանն իմ տունն է 32

Կ. ՄԱՐՏՉՅԱՆ

Համալիր պարապմունքները՝ որպես ուսուցման կազմակերպման արդյունավետ ձև 37

Ա. ԳԱԼՈՅԱՆ

Հուզական զարգացումը վաղ տարիքում..... 41

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒԷ ԱԼԵՔՍԱՅԱՆ

Ինքնուրույնության և մոտիվացիայի ձևավորումը՝ կրտսեր դպրոցականների տարիքում 46

ՍՏԵՂՃԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

ԱՆՆԷՐՏ ԱՎԵԳՅԱՆ

Աշնան բեմականացում 53



ՄԻԱՍՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ժամանակն է՝ մայրենիի դասավանդման մեթոդիկական վերազինելու այնպիսի մոտեցումներով, որոնց միջոցով արդի դպրոցն ունակ լինի պատասխանելու ժամանակի մարտահրավերներին: Բանն այն է, որ հաճախ ենք ականատես լինում դեպքերի, երբ սովորողը զինված է կայուն գիտելիքներով, սակայն անհրաժեշտության դեպքում դժվարանում է դրանք կիրառել: Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ դպրոցում սովորողի ստացած կրթությունը խաթարում է աշխարհի ամբողջականության վերաբերյալ իր պատկերացումները և մասնատում ճանաչողության ինքնարուխ գործընթացը:

Առաջադեմ մանկավարժությունը գնալով ավելի ու ավելի է հակվում կրթության բովանդակության միասնացման գաղափարին, որովհետև դրա հիմքում ընկած է աշխարհի աղճատված ամբողջականության վերականգնումը: Ուսուցման կազմակերպման այս սկզբունքը կիրառելու դեպքում, մասնագետների պնդմամբ, կհարստանա կրթության բովանդակությունը, և ավելի տեսանելի կդառնան ու կբացահայտվեն շրջապատող իրականության առավել էական կապերը և այդ նույն իրականության տարբեր կողմերի միջև առկա հարաբերությունները [1]:

Շատ վաղ տարիքից են երեխաների մեջ ձևավորվում իրենց հատուկ պատկերացումներն աշխարհի մասին: Սակայն դպրոց ընդունվելով՝ միանգամից աղարտվում է այդ ամբողջական ընկալումը, և դրվում են սահմաններ՝ առարկաների տեսքով: Կրթական մյուս աստիճաններում էլ դպրոցում ձեռք բերած գիտելիքը շարունակում է մնալ որպես կտրտված տեղեկույթ՝ տարբեր ուսումնական առարկաների տեսքով, և սովորողը այդպես էլ չի կարողանում կրթական մյուս աստիճաններում դրանցից հավաքել ամբողջը: Փոխարենը շարունակ ավելանում է գիտելիքի քանակական կողմը, որը հանգեցնում է մտային ավելորդ ծանրաբեռնվածության, որովհետև ընդամենը բեռ է և չի ձևավորվել ճանաչողությունից ստացվող հաճույքի զգացողության գուգորդմամբ: Եվ ժամանակի ընթացքում պարզվում է, որ երեխան չի կարողանում ջրի կաթիլի մեջ տեսնել ամբողջ օվկիանոսը կամ ծառի հետևում՝ անտառը: Իսկ չէ՞ որ կրթության նպատակն է՝ պատրաստել լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և ըստ անհրաժեշտության

դրանք կիրառելու կարողությամբ, միաժամանակ չվախենա դժվարություններից և պատրաստ լինի ստացած գիտելիքներն օգտագործել ծառայած խոչընդոտները հարթելու նպատակով:

Այդ գործընթացը պետք է սկսել կրթության առաջին աստիճանից՝ տարրական դպրոցից, որը սովորողին հնարավորություն կընձեռի պահպանել երևույթների ամբողջականությունը, բազմաշերտությունը, համակարգվածությունն ու զգայականությունը: Ուստի հենց տարրական դպրոցում երեխան պիտի ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և նրա երևույթների վերաբերյալ: Հետևաբար անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարրեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Այս ճանապարհն ընտրելու դեպքում սովորողն զբաղվում է ստեղծագործական աշխատանքով: Ծարունակ փոխում է գործունեության ոլորտը, դա էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Աշակերտը սովորում է համակարգել ստացած տեղեկատվությունը, որն էլ անհրաժեշտ է հետագայում ավելի բարձր կարգի մտածողության անցնելու համար: Այսպես առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու նպաստում երևույթի բազմակողմանիորեն (տարրեր առարկաների տեսքով) դիտարկմանը և ընկալմանը:

Միասնացում ասելով՝ չպետք է հասկանալ միայն առնչակից առարկաների միավորումը. երևույթը բազմաշերտ է և բազմիմաստ: Փորձենք խմբավորել տարրական դասարաններում անհրաժեշտ և պարտադիր միասնացման առավել ընդհանուր ձևերն առանձին-առանձին:

1. **Միավորվում են մի քանի առնչակից առարկաների ծրագրերը:** Այս մոտեցումն արդարացված է, քանի որ դրա հիմքում ժամանակի և երեխայի մտածողական հնարավորությունների հաշվառումն է: Այս դեպքում երեխայի մեջ չի խաթարվում՝ որոշակի տարիքում, տվյալ դեպքում տարրական դասարաններում, աշխարհի միասնական, ամբողջական ընկալումը: Այսպես,

- հայոց լեզուն, գրականությունը, մասամբ՝ պատմությունը, աշխարհագրությունն ու բուսաբանությունը միավորված են «Մայրենի» առարկայի մեջ:
- քվարանության, հանրահաշվի և երկրաչափության տարրական գիտելիքները միասնացված են «Մաթեմատիկա» առարկայի մեջ:
- «Ես և շրջակա աշխարհը» միավորում է «Գրականություն», «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Քիմիա»՝ «Աշխարհագրություն», «Առողջ ապրելակերպ», «Բուսաբանություն» և «Կենսաբանություն» առարկաները:

2. **Տարրեր առարկաներից ձեռք բերված կարողությունները դրսևորվում են որևէ առարկայի դասաժամին:** Այս երևույթը ծանոթ է նաև միջառարկայական կապեր անվանումով: Ընդունենք՝ երկրորդ դասարանում «Մայրենի» առարկայից հերթական դասը Գրիմն եղբայրների «Ծեր պապն ու թոռը»-ն է: Բնագրի շուրջ

բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո ուսուցիչը կարող է հանձնարարել, որ յուրաքանչյուրը նկարի իր պապիկին կամ տատիկին, բացիկներ պատրաստի նրանց համար /կապ՝ տեխնոլոգիայի և կերպարվեստի հետ/: Հնարավոր է նաև գրույց կազմակերպել, թե ինչպես են մեզ մոտ վերաբերվում մեծերին, ինչ սովորույթներ կան այլ ժողովուրդների մոտ, կա՞ն արդյոք մեծահասակների մեծարման օրեր, ինչպե՞ս պետք է հաղորդակցվել մեծահասակների հետ /կապ՝ պատմության և շրջակա աշխարհի հետ/: Կարող են կատարել համապատասխան երգեր/կապ՝ երգեցողության հետ/ և այլն: Նույն դասաժամին տարբեր բնույթի աշխատանքների մասնակից դառնալով և զանազան գործողություններ կատարելով՝ երեխան ձերբազատվում է միօրինակության ձանձրույթից: Այդ կերպ նա հետաքրքրությամբ է մասնակցում ուսումնական գործընթացին և առավել խոր ընկալում դասանյութը:

3. Նույն թեման կամ գաղափարը դիտարկվում է ուսումնական տարրեր առարկաներ ուսուցանելիս: Տվյալ երևույթին անհրաժեշտ է մոտենալ այն համոզմամբ և ընկալմամբ, որ ուսումնական առարկաները նույն աշխարհի դրսևորումներն են՝ տարբեր կողմերից, և դրանք իրար են միացած ներքին կապերով և ամենևին չեն խաթարում աշխարհի ամբողջականության մասին երեխայի նախնական պատկերացումները: Մա ավելի հեշտ է իրականացնել տարրական դասարաններում, քանի որ մի քանի առարկաների ուսուցիչը մեկն է՝ դասվարը, ու եթե որոշ առարկաներ էլ նա չի դասավանդում, միևնույն է, կարող է ներկա գտնվել այդ դասերին, որովհետև այլ դասարաններում զբաղվածություն չունի:

Կրկին վերը նշված դասի օրինակով բացատրենք երևույթը: Դասվարը նախապես պայմանավորվում է երգեցողության, կերպարվեստի և տեխնոլոգիայի ուսուցիչների հետ, որ իրենց դասաժամերին ևս անդրադառնան այդ թեմային: Նույնիսկ կարող են համագործակցել և միասին կազմել տվյալ դասի պլանը: Իսկ ինքը մաթեմատիկայի դասաժամի մի հատվածն է հատկացնում այդ թեմային: Այսպես, մաթեմատիկայի դասաժամին երեխաները կարող են հաշվել, թե ընտանիքը քանի հոգուց է բաղկացած: Նրանցից քանիսի տարիքն է միասին գերազանցում 50-ը: Քանի տարով է յուրաքանչյուրի պապը կամ տատը իրենից մեծ, կամ ինքը փոքր նրանցից: Քանի տարեկան են հայրն ու մայրը, կամ ինքն ու քույրը /եղբայրը/ միասին: Քանի տարի հետո յուրաքանչյուրը կլինի տատիկի կամ պապիկի տարիքին և այլն:

Երգեցողության դասաժամին կարող են մի երգ սովորել ընտանիքի կամ պապիկի ու տատիկի մասին: Կերպարվեստի դասին կարող են նկարել իրենց ընտանիքը կամ միայն ընտանիքի մեծերին: Տեխնոլոգիայի դասաժամին կարող են թղթից ակնոց, ձեռնափայտ կամ այնպիսի իր պատրաստել պապիկի կամ տատիկի համար, որը նրանք շատ են օգտագործում կամ սիրում:

Այս մեթոդը նպաստում է, որ երեխան կարողանա երևույթների միջև կապեր տեսնել, բացատրություններ տալ դրանց, սովորի երևույթը քննել տարբեր կողմերից: Չէ՞ որ ավելի բարձր դասարաններում նա պիտի կարողանա համադրել տարբեր երևույթներ: Եվ, ամենակարևորը, սովորում է երևույթը գնահատել համակողմանի քննելուց հետո և սեփական փորձով համոզվում, որ յուրաքանչյուր կողմից դիտարկելով՝ բացվում է երևույթի մի նոր հատկանիշ, որը մինչ այդ տեսանելի չէր: Միաժամանակ ամեն մի դասաժամի տվյալ առարկայի առանձնահատկությանը բնորոշ մտածողության ձևերն են զարգանում. մայրենիի դասաժամին երևույթը լեզվական և երևակայական մտածողությամբ է դիտարկվում, մաթեմատիկայի դասաժամին՝ տրամաբանական մտածողությամբ, տեխնոլոգիայի ժամին՝ տարածական և ստեղծագործական, իսկ երգեցողության ժամին՝ զգայական մտածողությամբ: Իսկ մտածողության տեսակների զարգացումն անհրաժեշտություն է տարրական դասարաններում, որովհետև նյութի ընկալման և վերարտադրման գործում մեծ դեր ունի երեխայի ձևավորված և զարգացող բազմաբնույթ մտածողությունը:

Եթե տարրական դպրոցում երեխայի բոլոր զգայարաններն ու մտածողության ձևերը լիարժեքորեն մասնակցեն գիտելիքի ձեռքբերմանը, ապա միջին և ավագ դպրոցներում առավել հարթ և դյուրին կընթանա ուսումնառությունն ու անձի կայացումը: «Չափազանց կարևոր է՝ ճանաչել մարդու բոլոր մտածողությունները և դրանց զուգորդման տեսակները, - գրում է Հ. Գարդները: - Մենք իրարից այսքան տարբեր ենք հիմնականում այն պատճառով, որ ունենք մտածողության զանազան զուգորդումներ: Եթե մենք կարողանանք ճանաչել դրանք, ապա հնարավորություն կունենանք լուծել այն հիմնախնդիրները, որոնք ծառայած են մեր առջև»: [4]

4. Մայրենի լեզվի բազմակողմանի դրսևորումները ուսումնական մյուս առարկաների մեջ: Մայրենի լեզուն նպատակաուղղված է այլ առարկաների առավել դյուրին ընկալմանը, իսկ մյուս առարկաներն իրենց խնդիրները լուծելիս հենվում են երեխաների կողմից մայրենիի իմացության մակարդակների վրա:

Մայրենի լեզուն դպրոցի բոլոր աստիճաններում սերտորեն կապված է մյուս բոլոր առարկաների հետ: Այն արտացոլում է իրականության բոլոր կողմերը, և առանց մայրենիի տիրապետման հնարավոր չէ ծավալել մտածական որևէ գործունեություն: «Լեզուն մտքի երևացող շերտն է», -ասել է Ջեյմս Բրիքոնը [4]: Մաթեմատիկայի վարժությունը կամ խնդիրը լուծելու համար երեխան պիտի կարողանա կարդալ և հասկանալ այն: Իսկ մայրենիի դասերը տարրական դասարաններում հենց այդ նպատակին են միտված, որպեսզի երեխան կարդա, հասկանա և վերարտադրի կարդացածը: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդումն սկսվում է երկրորդ դասարանից, և սովորողը պիտի կարողանա պատմել

կարդացածը, պահպանել կարդացածի տրամաբանական հաջորդականությունը, ակտիվացնել բառապաշարը նոր հանդիպած բառերով, մաքուր և հստակ արտաբերել ասելիքը, կապակցված խոսք կառուցել: Մրանք այն խնդիրներն են, որոնք դրված են մայրենիի առջև: Ուստի դասվարը պիտի հետևի, որ մյուս դասերին ևս պահպանվեն խոսք կառուցելու սկզբունքները: Այլ առարկաների ուսուցիչները ևս պիտի հետևողական լինեն, որ երեխան միայն մայրենիի դասաժամերին իրեն պատասխանատու չզգա կապակցված խոսք կառուցելու գործում: Չէ՞ որ երգեցողության դասին մինչ երգելը աշակերտները կարդում են երգի տեքստը: Ուրեմն երգեցողության ուսուցիչը ևս պիտի շարունակի հետևել մայրենիի դասաժամերին երեխաների առջև դրված պահանջներին, բառերի ճիշտ շեշտադրությանն ու բառերի մաքուր արտաբերմանը: Կերպարվեստի և տեխնոլոգիայի ժամերին երեխան ստեղծում կամ նկարում է ինչ-որ բան և պատմում իր կատարածի մասին: Ուսուցիչը հետևում է, որ նրա խոսքը լինի սահուն, արտահայտիչ, կապակցված և մաքուր: Նման հետևողականության առկայության պայմաններում երեխաները կհամոզվեն, որ իրենց առջև դրված է ոչ թե տվյալ դասաժամին անհրաժեշտ պահանջ, այլ ընդհանրական պայման՝ ճիշտ և ազատ հաղորդակցության կարողություն ձեռք բերելու ճանապարհին:

Թվարկված բոլոր մոտեցումները նպաստում են, որ տարրական դասարանների երեխան ուսուցումը դիտարկի որպես ճանաչողություն, որի ընթացքում նրա մեջ կզարգանան մի շարք անհրաժեշտ կարողություններ: Տարրական դասարաններում ուսումնական առարկաների բազմաբնույթ միասնացումը, այսինքն՝ ճանաչողության ամբողջականության պահպանումը ուսուցման արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոն է և ուսուցման արդիական նպատակ:

Գայանե Սկոչյան

*ԿԱԻ հայագիտության և
սոցիալ-մշակութային առարկաների բաժնի մասնագետ*

Օգտագործված գրականություն

1. Колягин Ю. М., Алексеев О.Л., Интеграция школьного обучения// Начальная школа. 1990. N 9.

ԲԱՅ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Ուսումնասանքի ընթացքում կիրառվող առաջադրանքները միջոց են տեսական նյութի գիտակցված և կայուն յուրացման համար: Դրանք մշակում են համապատասխան կարողություններ և հմտություններ, օգնում տեսական նյութը գործնականում կիրառելու հմտությունների զարգացմանը:

Առաջադրանքները (ընդգծենք, որ **առաջադրանք** եզրույթը մենք օգտագործում ենք լայն իմաստով) հիմնականում համակարգվում են ըստ այն մոտեցման, թե դրանք սովորողին ինչպիսի գործունեության են մղում՝ վերարտադրողական, մարզողական, ստեղծագործական, թե՞ տրամաբանական:

Այն առաջադրանքները, որոնց կատարման եղանակներն ու քայլաշարերը սովորողին հայտնի են, նրան մղում են վերարտադրողական գործունեության: Մինչդեռ տարբեր աստիճանի դժվարությունների հաղթահարում ենթադրող առաջադրանքները աշակերտին մղում են ստեղծագործական գործունեության: Ինչու՞: Բանն այն է, որ վերջիններիս կատարման ընթացքը (զոհե մասամբ) սովորողներին հայտնի չէ. դրանք ոչ ստանդարտ, պակասող տվյալներով և այլ բնույթի առաջադրանքներ են:

Ժամանակակից դպրոցը կողմնորոշում է կրթության այնպիսի կառույցի ստեղծման, որը կնպաստի սովորողների ինքնագարգացմանը՝ ելնելով նրանց անհատական կարողություններից և անձնական փորձից: Այս նպատակին կարելի է հասնել առարկայի բովանդակության մեջ փոփոխություններ կատարելով և մաթեմատիկայի տարրական դասընթաց ներմուծելով լրացուցիչ բաղադրիչներ: Դրանք դուրս են ավանդական ուսուցման համակարգից, բայց բարձրացնում են սովորողների գիտելիքների յուրացման մակարդակը և ձևավորում մաթեմատիկական բազմազան նոր գաղափարներ:

Այսօր հարկավոր է ուսուցչի ջանքերը նպատակաուղղել առաջադրվող նյութի արդիականացմանը, այն է՝ ուսուցումը դարձնել կրթական ժամանակակից պահանջներին համահունչ, իսկ գործող դասագրքերում հիմնականում ընդգրկված են մարզողական առաջադրանքներ, որոնք պահանջում են ստանդարտ մոտեցումներ, լուծման քայլաշարային եղանակներ և այլն: Իհարկե, ուսուցման գործընթացում անհրաժեշտ են նաև այս բնույթի առաջադրանքներ, քանի որ

դրանք օգնում են աշակերտին՝ ավելի խորությամբ յուրացնելու ստացած գիտելիքները՝ դրանք գործնականում կիրառելով:

Վերարտադրողական գործունեությունն աշակերտից շատ ջանքեր չի պահանջում. այս դեպքում աշակերտն իրեն ծանոթ մաթեմատիկական պնդումների, սահմանումների, տրված նմուշօրինակների կիրառմամբ՝ կատարում է համապատասխան գործողություններ: Իսկ որոնողական գործունեությունը պահանջում է առաջադրանքի ինքնուրույն կատարում, դրա լուծման նոր հնարների որոնում-գտնում, տվյալների միջև մտովի ընտրություն և համակցում, ծանոթ իրավիճակներից գիտելիքներն ու կարողությունները նոր, անծանոթ իրավիճակներ փոխադրում:

Պետք է նկատել, որ վերարտադրողական առաջադրանքներն աշակերտներին շուտ ձանձրացնում են, իսկ որոնողական-հետազոտականները, չնայած առաջացրած զգալի դժվարություններին, ոգևորում և ուրախացնում են նրանց, հատկապես, երբ դրանց լուծումը պսակվում է հաջողությամբ:

Որոնողական բնույթի առաջադրանքներ կատարելիս աշակերտը հայտնագործողի դերում է, և նրա մտածողությունը զարգանում է հենց այդպիսի իրավիճակներում, այսինքն՝ երբ նա առաջարկում է վարկածներ, հայտնում կարծիքներ, կատարում դատողություններ, ստուգումներ և ուղղումներ:

Տարրական դասարանների մաթեմատիկայի դասագրքերում երկու տեսակի առաջադրանքներից էլ ընդգրկված են (իհարկե, չի կարելի խոսել դրանց ճիշտ համամասնության մասին): Սակայն ուսուցիչը, ելնելով իր դասարանի առանձնահատկություններից և իր առջև դրված նպատակից, դրանց քանակը կարող է ավելացնել՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում:

Այդ կարգի առաջադրանքները, որոնք մեթոդական գրականության մեջ հանդես են գալիս տարբեր անվանումներով (խնդրահարույց, ստեղծագործական, որոնողական, հետազոտական, հետաքրքրաշարժ և այլն), կանվանենք **բաց** առաջադրանքներ:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականների ուսումնառության փորձը՝ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում կարող ենք կիրառել երկու տեսակի բաց առաջադրանքներ.

1. **անորոշ պայմաններով առաջադրանքներ** (կրտսեր դպրոցականների համար այսպիսի առաջադրանքների կատարման դժվարությունը լուծման համար պակասող տվյալների որոշման հարցն է).
2. **առաջադրանքներ, որոնք ունեն մի քանի տարբերակով պատասխաններ և պահանջում են լուծման տարբեր եղանակներ** (այսպիսի առաջադրանք-

երի սուբյեկտիվ դժվարությունը հետևյալն է. կրտսեր դպրոցականները, գտնելով մի պատասխան, բավարարվում են դրանով և դադարում հաջորդ տարբերակների որոնումը՝ համարելով այդ առաջադրանքն արդեն լուծված):

Կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում մատնանշված առաջադրանքների արդյունավետ կազմակերպումը կարևոր միջոց է՝ մաթեմատիկական մշակույթի և մտածողության (ճկունություն, տրամաբանություն, դատողականություն) ձևավորման համար:

Նկատելի է, որ բաց առաջադրանքները, բացի խնդրահարույց իրավիճակ ստեղծելուց, մտավոր աշխատանքում առաջացնում են զգացմունքայնություն՝ զարգացնելով ներքին մոտիվացիա, և ակտիվացնում են հոգեկան գործընթացները: Արդյունքում ձևավորվում են ճանաչողական կարողություններ, և զարգանում է մտածողությունը:

Նմանատիպ առաջադրանքների լուծման ընթացքում կրտսեր դպրոցականներն առնչվում են մաթեմատիկայի տարրական դասընթացի տարբեր բաժինների: Օրինակ՝ «Առարկայի հատկությունները» քեման ուսումնասիրելիս առաջնությունը պետք է տալ առաջադրանքների այնպիսի ձևակերպումներին, որոնց կատարումը կպահանջի բազմազան լուծումներ: Օրինակ՝ «Կանաչ պատկերին անուն տուր», «Գտի՛ր դեղին գույնի մեծ պատկերը»:

Եթե տարբեր օբյեկտների՝ այդ թվում նաև մաթեմատիկական (երկրաչափական պատկերների, մաթեմատիկական արտահայտությունների, հավասարությունների և անհավասարությունների) համեմատման և դասակարգման տրոհման կոնկրետ հատկանիշ չնշենք, ապա դա սովորողներին կմղի լուծման մի քանի տարբերակների որոնմանը: Կարելի է կիրառել նաև առաջադրանքներ՝ ինքնուրույն օրինակներ կազմելու, օրինակի պայմանը փոխելով այլ առաջադրանք ստանալու, ինչպես նաև օրինաչափությունների վերաբերյալ: Մասնք ևս բաց առաջադրանքներ են, քանի որ այստեղ աշակերտը նույնպես ստեղծագործական աշխատանք է կատարում՝ օգտագործելով իր ուսումնառության փորձը: Բերենք նմանատիպ առաջադրանքների օրինակներ՝ «Կազմի՛ր բաժանման օրինակներ, որոնց պատասխանը լինի 12», «Կազմի՛ր արտահայտություն, որտեղ անհայտ է նվազելին», «Կազմի՛ր օրինակ՝ քո նոր սովորած հաշվողական եղանակի վերաբերյալ», «Կազմի՛ր հավասարություն, որտեղ անհայտ թիվը երկնիշ թվերի գումար է՝ կարգային անցումով», «Գտի՛ր այն երկնիշ թիվը, որի թվանշանների գումարը 5 է », «Գտի՛ր այն երկնիշ թիվը, որը 4 անգամ մեծ է իր թվանշանների գումարից» (24, 12, 36, 48), «48 + 24 արտահայտության մեջ

միավորները փոփոխի՝ այնպես, որ կարգային անցում չլինի (45 + 24, 40 + 24, 48 + 20):

Նշենք, որ սկզբնական շրջանում աշակերտների ուշադրությունը հարկավոր է հրավիրել ներկայացված տարբերակների կատարմանը, իսկ այնուհետև մղել նրանց որոնելու հնարավոր այլ լուծումներ:

Խնդրի ձևավորման սկզբնական փուլում բաց առաջադրանքների օգտագործումը սովորողներին օգնում է հասկանալու, որ առաջադրանքի հարցին պատասխանելու համար, հարկավոր է տվյալների որոշակի քանակ: Օրինակ՝ «Պարահրապարակում պարում էին 8 տղա և աղջիկներ: Տղաները քանիստ՞ էին ավելի աղջիկներից»:

Նմանատիպ խնդիրները բազմագործառույթ են: Դրանց լուծումները սովորողներին հնարավորություն են ընձեռում քննարկել և լրացնել խնդրի պայմանում պակասող քանակական բնութագրիչները:

Գիղակտիկական կարևոր նշանակություն ունի բաց առաջադրանքների կիրառումը՝ մեծությունների, շարժման, **գին-քանակ-արժեք** բաժինների վերաբերյալ պատկերացումներ ձևավորվելիս: Օրինակ՝

Առաջադրանք 1.

Արամը տնից դպրոց պետք է անցներ 300 մ, իսկ Կարենը՝ 400մ: Տղաներից ո՞վ է մոտ ապրում դպրոցին: Ո՞վ նրանցից ավելի շուտ կհասնի դպրոց»:

Առաջադրանք 2.

«Արամը տնից դպրոց ճանապարհն անցնում է 7 րոպեում, իսկ Կարենը՝ 10 րոպեում: Ո՞վ է նրանցից քիչ ժամանակ ծախսում ճանապարհի վրա: Ո՞վ է մոտ ապրում դպրոցին»:

Առաջադրանք 3.

«Անին գնել էր տետրեր և գրիչներ: Տետրերի համար վճարել էր 200 դրամ, իսկ գրիչների համար՝ 240 դրամ: Անին գրիչ էր շատ գնել, թե՛ տետր»:

Առաջադրանք 4.

«Անին և Սոնան սիրում են կարդալ գրքեր: Գիրքը, որը կարդում է Անին՝ ունի 38 էջ, իսկ Սոնայի գիրքը՝ 45 էջ: Նրանցից ո՞վ արագ կկարդա իր գիրքը»:

Աշակերտների զգալի մասը «ծուղակները» չի նկատում և առաջադրված հարցերին պատասխանում է՝ պատճառաբանելով. «Եթե հեռավորությունը մեծ է, ուստի շատ ժամանակ կծախսվի»:

Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ պատասխանի համար պակասում են արագությունից արժեքից և այլ մեծություններից կախված տվյալներ: Այսպիսով, աշակերտները առաջադրանքի լուծման համար ինքնուրույն որոնում-գտնում են անհրաժեշտ մեծություններ՝ օգտագործելով այդ եզրույթներն իրենց բառապաշարում, լրացնում են խնդիրների պայմանները նոր տվյալներով՝ հայտնաբերելով լուծման տարրեր եղանակներ:

Կրտսեր դպրոցականները դժվարություններ են ունենում մեծությունների՝ հատկապես մակերեսի և պարագծի յուրացման հարցում: Այդ կապակցությամբ սովորողներին հարկավոր է առաջադրել երկրաչափական առաջադրանքներ՝ բաց պայմաններով՝ հանգեցնելով նրանց այն մտքին, որ հավասար մակերեսներ ունեցող երկրաչափական պատկերներն ունենում են կողմերի տարրեր երկարություններ, այսինքն՝ պարագիծ (և հակառակը):

Առաջադրանք

1.

Ուղղանկյունաձև հողամասի մակերեսը հավասար է 24 քառ.մ-ի: Որքա՞ն է այդ հողամասը շրջապատող ցանկապատի երկարությունը:

Այս առաջադրանքը նպատակահարմար է լուծել՝ օգտվելով ընտրության մեթոդից, և լուծումը ներկայացնել աղյուսակի տեսքով.

a /մի կողմը/	b /մյուս կողմը/	P /պարագիծը/
24 մ	1 մ	$(24 + 1) \times 2 = 50$ (մ)
12 մ	2 մ	$(12 + 2) \times 2 = 28$ (մ)
8 մ	3 մ	$(8 + 3) \times 2 = 22$ (մ)
6 մ	4 մ	$(6 + 4) \times 2 = 20$ (մ)

Աշակերտների ուշադրությունը հարկավոր է հրավիրել այն հանգամանքի վրա, որ պարագծի ավելի մեծ արժեք ունեն «ձգված» հողամասերը, ավելի փոքր՝ «քառակուսիաձև»/դրանց այդպես են հաճախ անվանում կրտսեր դպրոցականներն այն ժամանակ, երբ ուղղանկյան երկարությունն ու լայնությունն իրենց քվային արժեքներով մոտ են լինում/:

Առաջադրանք 2.

9 քառ. կմ մակերես ունեցող ուղղանկյունաձև հողամասը շրջափակվում է 12 կմ երկարություն ունեցող ցանկապատով: Որքա՞ն են այդ հողամասը շրջափակող ցանկապատի կողմերի երկարությունները:

Ինքնուրույն անցկացնելով հետազոտական աշխատանքներ՝ աշակերտները համոզվում են, որ 12 կմ երկարություն ունեցող ցանկապատով $(5+1) \times 2=12$ (կմ), $(4+2) \times 2=12$ (կմ) և այլն/ կարելի է շրջափակել տարբեր մակերեսներ ունեցող ուղղանկյունաձև հողամասեր՝ 5 քառ. կմ–ից մինչև 9 քառ. կմ:

Առաջադրանք 3.

Պապիկը կառուցում է ամառանոցային տնակ: Նա միատեսակ լայնությամբ տախտակներից պատրաստում է ամառային տնակ և հարցնում թոռնիկին. «Հաշվի՞ր, թե քանի՞ ռեյկա է ինձ հարկավոր, որպեսզի տախտակների միջև կարերը փակվեն»:

Սա բաց առաջադրանքի դասական օրինակ է, քանի որ այստեղ բացակայում են թվային տվյալները: Աշակերտը դրանք պետք է որոշի ինքնուրույն: Ցավոք, այսպիսի առաջադրանքների կիրառումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սահմանափակ է: Եթե այս առաջադրանքում տրվեին տնակի չափսերը, ապա դա կվերածվեր ավանդական առաջադրանքի:

Այդ առաջադրանքը բաց է զուտ նրանով, որ աշակերտն ինքը պետք է որոշի, թե ի՞նչ մեծություններ պետք է չափի: Տեղին կլինի դպրոցականին առաջարկել տնակի գծագիրը կամ հատակագիծը, ինչպես նաև մասշտաբը:

Վերջում նշենք, որ աշակերտները կատարելով այսպիսի առաջադրանքներ, զգում են հետազոտական-ինքնուրույն աշխատանքի առավելությունը, ցուցաբերում փորձարարական կարողություններ՝ փնտրելով յուրօրինակ, ոչ ստանդարտ լուծումների ձևեր: Լուծելով բաց առաջադրանքներ՝ աշակերտները ձեռք են բերում ստեղծագործական գործունեության փորձ, կարողանում են ակտիվ կիրառել իրենց գիտելիքները՝ տիրապետելով գործողությունների նոր եղանակների, ձևերի և հնարների: Այս իմաստով դիպուկ է Պոյայի ձևակերպումը. «Նպատակը կթելադրի ուղին»:

Մ. Մանուկյան
*ԿԱԻ Նախադպրոցական և տարրական կրթության
բաժնի մասնագետ*

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԻ ՕՐԿԱ ՊԼԱՆԻ ՆԱԽԱԳՑԵՐ

Դ ա ս ի թ ե մ ա ն՝ «Մենք գնում ենք էքսկուրսիա»

Նախատեսված է թեմայի յուրացումն իրականացնել դասղեկական 4 հաջորդական ժամերի ընթացքում /շաբաթը՝ 1 ժամ/:

Դ ա ս ի ն պ ա տ ա կ ը. դասերի արդյունքում երեխաները պետք է՝

- ձեռք բերեն էքսկուրսիայի կազմակերպման, դրան պատշաճ նախապատրաստվելու ունակություններ և հմտություններ,
- դառնան էքսկուրսիայի կազմակերպման գործող մասնակից,
- կարևորեն իրենց անձը դասարանի կյանքում տեղի ունեցող իրադարձություններում,
- պատասխանատվություն կրեն ընդունված որոշումների համար:

Որպեսզի էքսկուրսիան չվերածվի բնության գրկում իրականացվող ինքնանպատակ կերուխումի, հարկավոր է դրա նախապատրաստական աշխատանքները կազմակերպել սովորողների ուժերով: Այս դեպքում էքսկուրսիան կդառնա մի գործընթաց, որին երեխան կրերի իր ակտիվ մասնակցությունը, ձեռք կրերի ճամփորդության, արշավի մեկնելուց առաջ ճիշտ նախապատրաստվելու, համապատասխան հաշվարկներ կատարելու պարզագույն ունակություններ և հմտություններ:

Խ թ ա ն ու մ


Ա ռ ա ջ ի ն դ ա ս

Ուր գ ն ալ

Հայտնի է, որ երեխաներին դուր է գալիս տարբեր ուղղությամբ էքսկուրսիաների կազմակերպումը: Դա հրաշալի հնարավորություն է՝ ընկերների հետ խաղալու, զբոսնելու, նախաճաշելու, ակտիվ շփման, հանգիստը միասին անցկացնելու համար: Բոլորն էլ ցանկանում են մասնակցել էքսկուրսիայի: Մնում է պարզել, թե ով ուր է առաջարկում մեկնել:

Կարևոր է, որ երեխան ինքն ընտրություն կատարի և պատճառաբանի իր ընտրությունը: Հասկանալի է, որ ընտրությունները կարող են տարբեր լինել: Վերջնական ընտրությունը կարելի է անել մեծամասնության օգտին:

Որևէ ընտրություն մերժելուց առաջ հարկավոր է հիմնավորել մերժման պատճառը /նշված վայրի հեռու լինելը, եղանակային անբարենպաստ պայմանները, տեղանքի վտանգավոր լինելը և այլն/: Այնուամենայնիվ, բոլոր ընտրությունները պետք է մանրամասնորեն քննարկվեն: Կարևոր է, որ յուրաքանչյուր երեխա գիտակցի իր կարծիքի կարևորությունը: Դասի այս փուլում ցանկալի է կիրառել «Մտազրոհ» մեթոդը: Այս դեպքում կարելի է գրատախտակին գրել «Էքսկուրսիա» բառը:



Բոլոր առաջարկությունները գրանցվում են գրատախտակին: Այս պահին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տեղանունների գրությանը /միջառարկայական կապի հատատում՝ մայրենիի հետ/:

Ենթադրենք՝ որոշվել է մեկնել Ծաղկաձոր: Հարկավոր է երեխաներին հանձնարարել մեկ շարաքվա ընթացքում հավաքել նյութեր, պատրաստել փորձիկ զեկուցումներ, բերել նկարներ, այլ կերպ՝ ամեն ինչ նախապատրաստել Ծաղկաձոր մեկնելու համար:

Խթանման փուլը շարունակվում է:

Ի ն չ տ ա ն ե լ Է Ք Ս Կ Ո Ւ Ր Ս Ի Ա մ ե կ ն ե լ ի ս

Հասկանալի է, որ Էքսկուրսիային անհրաժեշտ բաղադրիչների ցանկը ճշգրտվելու է ծնողների կողմից: Սակայն այս փուլում կարևոր է, որ երեխան մտնի գործընթացի մեջ, զգա իր պատասխանատվությունը այդ կարևոր միջոցառմանը նախապատրաստվելու ընթացքում: Երեխաներին հարկավոր է բացատրել, որ հարկ եղած դեպքում պետք է անցնել գետը, սարալանջով բարձրանալ և այլն: Այդ ժամանակ ավելորդ իրերը հոգս են ստեղծում բոլորի համար: Երեխաները պետք է գիտակցեն, որ Էքսկուրսիա մեկնելիս վերցնում են ոչ թե

այն ամենը, ինչը կարող է պետք գալ, այլ այն, առանց որի անհնար կլինի ճամփորդել:

Դասարանը բաժանվում է խմբերի: Դաստեղը բացատրում է հանձնարարությունը՝ կազմել անհրաժեշտ իրերի ցանկը: Խմբերը քննարկում են, թե ինչ պետք է վերցնեն իրենց հետ: Որոշ ժամանակ անց ներկայացնում են իրենց կազմած ցուցակները: Դրանք մանրամասն քննարկվում են: Պատճառաբանվում է յուրաքանչյուր տարբերակ: Ասենք՝ ինչու է անհրաժեշտ ջուր վերցնել, կամ յոդ ու բամբակ: Քննարկումից հետո կազմվում է վերջնական ցուցակ: Երեխաներն ստանձնում են պարտավորություններ, թե ով ինչ է իր հետ վերցնելու: Այդ ցուցակը արտագրում են Ա4 չափսի թղթի վրա/ կարելի է նաև ձևավորել/ և փակցնում դասարանում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Սրանով ավարտվում է դասի խթանման փուլը:

Հանձնարարություն հաջորդ դասի համար՝ հավաքել Ծաղկածորին վերաբերող նյութեր:

Երկրորդ դասաժամ

Ի մաստի ը ն կ ա լ ու մ

Այս փուլում ուսումնասիրվում, քննարկվում են երեխաների հավաքած բոլոր նյութերը /Օրբելի եղբայրների տուն-թանգարան, Կեչառիսի Սբ. Հարություն եկեղեցի, ճոպանուղի, քարտեզ, մանկական հանգստի գոտիներ, ժամանակակից շինություններ, լուսանկարներ, և այլն/: Երեխաները ներկայացնում են իրենց աշխատանքները: Հարկավոր է այդ ամենը թողնել դասարանում, որպեսզի երեխաները դրանք պարբերաբար դիտելու և քննարկելու հնարավորություն ունենան:

Ա ն վ տ ա ն գ ու թ յ ա ն կ ա ն ո ն ն եր ի պ ա հ պ ա ն ու մ ը է ք ս կ ու ռ ս ի ա յ ի ժ ա մ ա ն ա կ

Մ ի ջ առ ար կ ա յ ա կ ա ն կ ա պ` « Ե ս եւ շրջակա աշխարհը »

Դասի այս փուլում երեխաները վերհիշում են այն ամենը, ինչը սովորել են «Ես և շրջակա աշխարհը» դասընթացից՝ բնության պահպանության, անվտանգության. առողջ ապրելակերպի վերաբերյալ: Այս աշխատանքը կարևոր է այն իմաստով, որ երեխաներն իրենց գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորություն են ունենում: Ընդհանուր քննարկումների արդյունքում կազմվում է

կանոնակարգ, որին պարտավոր են ենթարկվել բոլորը: Կանոնակարգը կարող է ունենալ այսպիսի տեսք:

1. Հեռու մնալ թունավոր միջատներից, սնկերից, անձանոթ բույսերից:
2. Գասարանից չառանձնանալ, հեռու չգնալ:
3. Ուտելուց առաջ անպայման լվացվել:
4. Ավտոբրուսի պատուհանից չկախվել:
5. Հագնել սպորտային հագուստ, սպորտային կոշիկներ, վերցնել տաք շորեր:
6. Անտառում կրակը վառած չթողնել:
7. Հանգստի տարածքը չկեղտոտել, վերջում անպայման հավաքել աղբը:
8. Շուտ փչացող ուտելիք չվերցնել:
9. Դոպանոլի նստելիս կապել ամրագոտին:

Կանոններն արտագրել Ա4 չափսի թղթի վրա և փակցնել երեխաների համար տեսանելի տեղում:

Երրորդ դասաժամ

Ի մաստի ը ն կ ա լ ու մ

Այս շաբաթների ընթացքում դասարանում կաիրի առողջ, ստեղծագործական մթնոլորտ: Երեխաները կքննարկեն, անընդհատ կուսումնասիրեն նյութերը, անհամբեր կսպասեն էքսկուրսիայի օրվան:

III դասաժամին, երբ երեխաներն ինքնուրույն կատարել են նախապատրաստական աշխատանքների մեծ մասը, այսինքն՝ գիտեն, թե ուր են գնում, ինչ են տանելու իրենց հետ, ինչպես են պահելու իրենց էքսկուրսիայի ժամանակ, կարելի է անցնել պարզագույն հաշվարկների:

Գասարանը բաժանել 3 համագործակցային խմբի: Կատարել աշխատանքի բաժանում

Միջառարկայական կապի հաստատում՝ մաթեմատիկայի հետ

I խ ու մ բ

Լուծել խնդիրը (1)

Երևանից Ծաղկաձոր 60 կմ է: Ավտոբրուսը մեկ ժամում անցնում է 40կմ: Որքա՞ն ժամանակ կպահանջվի Երևանից Ծաղկաձոր հասնելու և Ծաղկաձորից Երևան հետ վերադառնալու համար:

II, III դասարանների ծրագրերում չկան շարժման խնդիրներ, երեխաները կփորեն խնդիրը լուծել հետևյալ կերպ.

- 1) 60+60= 120 կմ

Քանի 40 կմ կա 120 կմ-ի մեջ

$$40+40+40=120 \text{ կմ}$$

1ժ 1ժ 1ժ

Պատ.՝ 3ժ կծախսվի գնալու և վերադառնալու համար:

II խ ու մ ք

Լուծել խնդիրը (2)

Երևանից կշարժվենք ժամը 9⁰⁰-ին, Երևանում կլինենք 20⁰⁰-ին: Հաշվենք Էրսկուրսիայի տևողությունը՝ $20-9 = 11$ ժ

Կատարել լրացուցիչ հաշվարկ՝ օգտագործելով I խմբի հաշվարկը (ճանապարհին կծախսվի՝ 3 ժամ):

$$\text{Բուն Էրսկուրսիայի տևողությունը՝ } 11-3 = 8\text{ժ}$$

III խ ու մ ք

Էրսկուրսիա մեկնելուց առաջ երեխան կատարեց գնումներ: Նա իր համար գրեց 1 սենդվիչ, 3 կարկանդակ, 2 տուփ կոնֆետ, 2 շիշ նարնջի հյութ:

Օգտվելով գնացուցակից՝ հաշվել, թե որքան վճարեց երեխան գնումների համար:

Գնացուցակ

Սենդվիչ- 200 դրամ

Կարկանդակ-100դրամ

Կոնֆետ 1տուփ-150 դրամ

Նարնջի հյութ-100 դրամ

Լուծում

1) $3 * 100 = 300$ (դր.) կարկանդակ՝ 3 հատ

2) $2 * 150 = 300$ (դր.) կոնֆետ՝ 2 հատ

3) $2 * 100 = 200$ (դր.) հյութ՝ 2 շիշ

4) $200+300+300+200 = 1000$ (դր.)

Պատասխան՝ 1000 դրամ:

Խմբերը ներկայացնում են իրենց կատարած հաշվարկները:

Երբ կատարված են պարզագույն հաշվարկները, ապա կարելի է կազմել Էրսկուրսիայի ժամանակացույցը: (Կազմել օրվա ռեժիմը՝ միջառարկայական կապ՝ մայրենի, ֆիզկուլտուրա):

- 8³⁰ - հավաքվել դպրոցում
- 9⁰⁰ - շարժվել
- 10³⁰ - ժամանում Ծաղկաձոր
- 10³⁰ - 11³⁰ – կարճատև հանգիստ , նախաճաշ
- 11³⁰ - 12⁰⁰ – պատրաստվել զրոսանքի
- 12⁰⁰ - 14⁰⁰ - զրոսանք ճոպանուղիով
- 14⁰⁰ - 15⁰⁰ – ճաշ
- 15⁰⁰ - 16⁰⁰ - հանգիստ, խաղեր
- 16⁰⁰ - 18⁰⁰ – զրոսանք Ծաղկաձորով (այցելություն Օրբելի եղբ. տուն-թանգարան, Կեչառիսի եկեղեցի և այլն)
- 18⁰⁰ - 18³⁰ – հավաքել իրերը, պատրաստվել վերադառնալու
- 18³⁰ – մեկնում
- 20⁰⁰ - ժամանում

Հասկանալի է, որ երեխաների կատարած հաշվարկները մոտավոր են, ուստի էական չէ դրանց ճշգրտությունը: Ներկայացված 3 դասաժամերի ընթացքում երեխան հնարավորություն կունենա կիրառելու իր գիտելիքները և կզգա դրանց կարևորությունն իր կյանքում: Իսկ հաշվարկները կքննարկվեն ու կլրացվեն ծնողների և ուսուցչի կողմից:

IV դասաժամ

Կ Ձ Ո Վ Ա Տ Ո Ւ Մ

Դասի այս փուլում իրականացվում է բուն էքսկուրսիան, որի ընթացքում երեխան հնարավորություն կունենա կիրառելու իր ունակություններն ու հմտությունները:

Մեկ ամիս շարունակ Ծաղկաձորի նկարները դիտած, համապատասխան նյութեր հավաքած և հետազոտական աշխատանքներ ու հաշվարկներ կատարած սովորողներն այժմ էքսկուրսիայի կմեկնեն բուռն ոգևորությամբ և անսահման հետաքրքրությամբ: Նրանցից շատերը կարող են հանդես գալ որպես էքսկուրսավարներ: Ողջ էքսկուրսիայի ընթացքում դասղեկը կհետևի իր աշակերտներին՝ իր համար արձանագրելով, թե որչափ են նրանք կարողանում իրենց գիտելիքները կիրառել գործնականում: Երեխաներին հեշտ կլինի ենթարկվել իրենց իսկ սահմանած կանոններին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Միջազգային պրակտիկայում՝ մասնավորապես տնտեսագիտության մեջ, կազմակերպության ներքին և արտաքին միջավայրի իրավիճակային գնահատումն ընդունված է անվանել SWOT վերլուծություն: Դա կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների գնահատումն է: SWOT անգլերեն strength /ուժեղություն/, weaknesses/թուլություն /, opportunities /հնարավորություններ/, threats /սպառնալիքներ/ բառերի սկզբնատառերն են: SWOT վերլուծության նպատակն է՝ վերլուծել կազմակերպության ուժեղ կողմերը, այսինքն՝ այն, ինչը ապահովում է մրցակցային առավելություններ, և թույլ կողմերը, այն, ինչը թույլ չի տալիս հասնել այդպիսի առավելությունների: Այնուհետև ստացված տվյալները զուգորդվում են, ինչը հնարավորություն է տալիս ուժեղ կողմերի միջոցով և հնարավորությունների օգտագործմամբ ուժեղացնել թույլ կողմերը և նվազագույնի հասցնել սպառնալիքների ազդեցությունը:

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ
Թույլ կողմեր	Հնարավորություններ

SWOT մատրիցա

Կարծում ենք, որ SWOT վերլուծություն կարելի է կիրառել նաև մանկավարժության մեջ: Դասարանը դիտարկելով որպես կազմակերպություն՝ անհրաժեշտ է մանրամասն վերլուծել դասարանի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները: Այնուհետև կարելի է մշակել հստակ ռազմավարություն, որի արդյունքում հնարավոր կլինի, հենվելով դասարանի ուժեղ կողմերի վրա, ուժեղացնել թույլ կողմերը, և օգտագործելով դասարանի հնարավորությունները՝ վերացնել հնարավոր սպառնալիքները:

Այս նախագծում փորձ է արվում կատարել SWOT վերլուծություն 3-րդ դասարանում:

Ուժեղ կողմեր

Աշխատասեր, հետաքրքրասեր, սովորելու ձգտում ունեցող, եռանդուն, համագործակցությանը հակված, ինքնուրույն որոշումներ կայացնող, ստեղծա-

գործական երևակայությամբ, քննադատական մտածողությամբ օժտված երեխաների ներկայություն:

Թույլ կողմեր

Աղմկելու, դժգոհելու հակում ունեցող, կամակոր, համագործակցային աշխատանքից խուսափող, անհամբեր, գերզգայուն, անվստահ, անհանդուրժող, ամաչկոտ երեխաների ներկայություն:

Հնարավորություններ

- Ուսումնառությանը նպաստող մթնոլորտի ստեղծում
- Բարյացակամ մթնոլորտի ստեղծմամբ աշակերտների լարվածության նվազում
- Փոխադարձ վստահության մթնոլորտում աշակերտների՝ բարդություններից ձերբազատում
- Երեխաների արդյունավետ համագործակցություն և հաղորդակցում
- Յուրաքանչյուր աշակերտի՝ դասարանի համար կարևոր լինելու հանգամանքի շեշտադրում
- Ուսման առաջադիմության բարձրացում
- Ընկերների հետ համերաշխ հարաբերվելու կարողության ձեռք բերում
- Ծնողական համայնքի ներգրավում դպրոցական կրթական գործընթացներում

Սպառնալիքներ

Դասարանում տարբեր խառնվածքների, բնավորությունների, կարողությունների, ունակությունների տեր երեխաների անհանդուրժողականությունը միմյանց նկատմամբ կարող է հանգեցնել մշտական բախումների, անառողջ մրցակցության, ուսման առաջադիմության նվազման, դասարանի աշակերտների բևեռացման:

SWOT վերլուծությունը դասարանի հետ ուսուցչի աշխատանքի ռազմավարության մշակման կարևոր նախադրյալ է: Դրա արդյունքում կրացահայտվեն դասարանի համար էական նշանակություն ունեցող հիմնահարցերը և կմշակվեն հնարավոր գործողություններ, որոնք կնպատակաուղղվեն դասարանում բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը, ուսման առաջադիմության բարձրացմանը:

Ռազմավարության մշակում

• Ռեսուրսային գործընթացում ավելացնել խմբային աշխատանքների քանակը

• Համագործակցային խմբեր ձևավորելիս ձգտել, որ նույն խմբում ներգրավվեն տարբեր խառնվածքի տեղեկասաներ/պասսիվ, ակտիվ, համագործակցող, ամաչկոտ/

• Խաղային իրավիճակը, հաղթելու ցանկությունը կօգնի ամաչկոտ, անվստահ երեխային ներգրավել մրցակցային գործընթացին, խմբի հաղթանակը վստահություն կներշնչի նրան. չէ՞ որ այդ հաղթանակի մեջ նա կունենա իր մասնաբաժինը

• Օգտագործելով ծնողների աջակցությունը՝ ձգտել, որ սովորողները դպրոցական կյանքից դուրս միմյանց հետ շփվելու, խաղալու, հանգստանալու հրարավորինս շատ առիթներ ունենան

• Նվաճել ծնողի վստահությունը

• Ավելացնել դասարանական էքսկուրսիաների քանակը, պարբերաբար կազմակերպել ներկայացումների, ֆիլմերի դիտումներ, այցելություններ քանգարաններ

• Երեխաների մեջ հանդուրժողականության, համագործակցության, փոխադարձ աջակցության, խնդիրներ լուծելիս քննադատական մտածողության դրսևորման, բանակցային, կոնֆլիկտների հաղթահարման որոշակի հմտությունների ձևավորման համար պարբերաբար անցկացնել դասեր՝ օգտվելով «Հանդուրժողականության ուսուցում» ձեռնարկից

• Հաշվի առնելով դասարանում տարբեր մակարդակի երեխաների ներկայությունը, մշտապես խթանել տարամակարդակ/շերտավորված/ ուսուցումը

• Երեխաների ուսման առաջադիմությունն ամփոփել այնպես, որ հաջողություններն ու թերացումներն ակնհայտ լինեն հենց իրենց՝ երեխաներին

Հավելենք, որ այս ցանկում պարբերաբար լրացումներն անխուսափելի են:

Կարծում ենք, որ SWOT վերլուծություն կարելի է կատարել ողջ դպրոցի տարբեր օղակների/տարրական, միջին, ավագ/ համար:

Նունե Խորենյան

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր

4-5 տարեկան երեխաների ձանձուղական շեփարհորությունների զարգացումը

Միջին նախադպրոցական տարիքը /4-5 տարեկան/ բավական բարդ ժամանակաշրջան է երեխայի կյանքում: Այս մեկ տարվա ընթացքում տեղի են ունենում ֆիզիոլոգիական և հոգեկան զարգացման որակական զգալի փոփոխություններ: Եթե տարեսկզբին փոքրիկն իր ցուցանիշներով նման է կրտսեր նախադպրոցականին, ապա տարեվերջին նա կարծես հայտնվում է ավագ նախադպրոցականի կարգավիճակում: Նրա արարքներն դառնում են առավել տրամաբանված, կանխատեսելի ու կառավարելի: Մեծահասակն ավելի հեշտությամբ է հասկանում փոքրիկին: Երեխայի կողմից առաջադրվող հարցերի միջոցով կամաց-կամաց ուրվագծվում է որոշակի համակարգ, որի միջոցով դժվար չէ հայտնաբերել նրա հետաքրքրությունների շրջանակը, անգամ պարզել, թե հետագայի համար գործունեության ինչ ասպարեզ է նախընտրելու:

Երեխաների ճանաչողական հետաքրքրությունները հիմնականում ձևավորվում են խոսքի զարգացման և մաթեմատիկայի պարապմունքների ընթացքում, ինչպես նաև առօրյա գործունեության տարբեր ձևերի ժամանակ /խաղ, աշխատանք, ուսուցում/:

Երեխան իր կարողությունների չափով ընկալում է շրջապատող աշխարհն ու որոշում իր տեղն այդ աշխարհում: Եթե նա գիտակցում է, որ այդ տեղն այնքան էլ կենտրոնական ու կայուն չէ, ուրեմն իրեն դիտարկում և գնահատում է քննադատորեն: Իր հարցասիրության շնորհիվ և մեծահասակի օգնությամբ նա կարողանում է ճանաչել աշխարհն իր ամբողջ բազմազանությամբ: Երեխան ուսումնասիրում է շրջապատը, ամեն մի նոր տեղեկատվություն «փորձարկում» իր վրա և դարձնում այն գիտելիք:

Տրամաբանական մտածողության շնորհիվ երեխաներն սկսում են առանձնացնել առարկաների ընդհանուր նշանները, խմբավորել դրանք՝ ըստ արտաքին հատկանիշների, նյութի և նշանակության, հասկանալ երևույթների պատճառահետևանքային պարզագույն կապերը, վերլուծել, հակադրել, համադրել ու ընդհանրացնել երևույթները:



Մանկապարտեզի միջին խումբ

• Երեխաները ծանոթանում են շրջապատող առարկաներին ու երևույթներին. կարողանում են դրանք ճիշտ անվանել, օգտագործել ըստ նշանակության, պատմում են շրջապատում տեղի ունեցող երևույթների մասին: Ընդլայնվում են պատկերացումները՝ հասարակական տրանսպորտի վերաբերյալ՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, նավ, գնացք: Ծանոթանում են ճանապարհային երթևեկության պարզագույն կանոններին/առարկայական միջավայր/:

• Ձևավորվում է պատկերացում մարդկային հարաբերությունների որոշ ձևերի մասին:

Ճանաչում և անվանում են ամենամոտ հարազատներին, հասկանում են, քե ինչ բան է ընտանիքը: Ընդլայնվում են նրանց պատկերացումները մանկապարտեզի ու նրա աշխատակիցների մասին: Մեր և հոգատար վերաբերմունք է դաստիարակվում հայրենի երկրի, հարազատ վայրերի /փողոց, տուն, մանկապարտեզ/ նկատմամբ: Փոքրիկները հաղորդակից են դառնում ժողովրդական ավանդույթներին և ազգային ու պետական տոներին: Տարբերակում են մասնագիտությունները՝ բժիշկ, վարորդ, խոհարար, վաճառող, դերձակ...: Ձևավորվում է հետաքրքրություն հասարակական կյանքի տարբեր երևույթների հանդեպ:

Նախադպրոցականը շրջապատող առարկաներն ու երևույթները ճանաչելու հետ մեկտեղ միաժամանակ ձեռք է բերում որոշակի ունակություններ, հմտություններ, սովորություններ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը միտված աշխատանքը համապատասխանեցնել գործունեության տարբեր ձևերին և ռեժիմային պահերին:
2. Լուրջ տեղ հատկացնել հեքիաթների ընթերցմանը, որոնց միջոցով երեխաները ոչ անմիջական ճանապարհով բազմաթիվ գիտելիքներ են ձեռք բերում մերձակա և հեռու գտնվող աշխարհի մասին:
3. Երեխաների առօրյան հագեցնել զգացմունքներն ու հուզականությունը խթանող միջոցառումներով:
4. Համագործակցել ընտանիքի հետ:

**4-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ
ՈՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

- Ջարգացնող խոսքային միջավայրի ստեղծում
- Աշխատանքի տարբեր ձևերի ու մեթոդների օգտագործում
- Աշխատանքի ճիշտ պլանավորում և կազմակերպում
- Մանկապարտեզի և ընտանիքի սերտ համագործակցություն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Մանկապարտեզում երեխաների զարգացման հաջողությունը պայմանավորված է տարբեր մեթոդիկաներով տարվող աշխատանքների ճիշտ կազմակերպմամբ:

4-5 տարեկան երեխաների ճանաչողական զարգացման ուղղությամբ աշխատանքները տարվում են ինչպես պարապմունքների ընթացքում, այնպես էլ ազատ գործունեության ժամանակ: Պարապմունքները երեխաների առօրյայում ձեռք բերած ճանաչողական գիտելիքների դասակարգման, ամփոփման և արդյունքների գնահատման միջոց են: Դրանք նպատակաուղղված են նրանց ինքնուրույնության և ստեղծագործական ներուժի զարգացմանը: Պարապմունքները նախատեսվում են շաբաթական մեկ անգամ: Ընդհանուր պարապմունքների քանակը տարվա ընթացքում կազմում է 36 ժամ: 18 ժամը հատկացվում է «Առարկայական միջավայր» և «Հասարակական կյանքի երևույթներ», իսկ մնացածը՝ «Ծանոթացում բնությանը» և «Էկոլոգիական դաստիարակություն» թեմատիկ բաժիններին:

**ՄԵԾԱՀԱՄԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՂՈՐԴՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՁԵՎԵՐԸ**

Երեխաների համար շրջապատի մասին նոր տեղեկատվության հիմնական աղբյուրը մեծահասակն է, իսկ դրա հաղորդումը հիմնականում իրականացվում է ճանաչողական հեքիաթների ու պատմվածքների միջոցով:

Այդ նպատակով դաստիարակը երեխաների հետ աշխատելիս պետք է օգտագործի՝

- ճանաչողական բնույթի հեքիաթներ,
- հեղինակային հեքիաթներ /նպատակն է՝ զարմացնել, զվարճացնել, հետաքրքրել երեխային և զարգացնել նրա երևակայությունը/,

- իրական պատմություններ՝ սեփական փորձից:

ՊԱՐԱՊՄՈՒՆԸՆԵՐԻՑ ԳՈՒՐՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Տոնիք

4-5 տարեկան երեխաների իմացական ոլորտի զարգացման գործում հատկապես էական է տոնակատարությունների դերը /պետական, ազգային, միջազգային/: Ողջ արարողությունը հարկավոր է կառուցել երեխաների հուզական ոլորտի վրա ներգործության աստիճանի և որակի հաշվառմամբ: Միջոցառումների ժամանակ կարիք չկա նշել կոնկրետ անվանումներ, որոնք բարդ են այս տարիքի երեխաների համար: Դրանք կամրոջացվեն ավագ խմբում: Այս տարիքի երեխաների հետ աշխատելիս դաստիարակները կարող են ավագ խմբում ներկայացված տոնակատարությունների թիվը պակասեցնել կամ թեթևացնել ծրագիրը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Զբույցներ

Կարևոր է գրույցի դերը երեխաների ճանաչողական զարգացման գործում: Այն իրականացվում է ինչպես պարապմունքների ժամանակ, այնպես էլ պարապմունքներից դուրս: Զբույցի պլանավորման և անցկացման ժամանակ հարկավոր է հաշվի առնել հետևյալ նախապայմանները՝

- գրույցը երկխոսություն է դաստիարակի ու երեխայի միջև,
- երկու կողմերը նախապես պետք է ծանոթ լինեն թեմային,
- երեխաներին պետք է տրվի ազատ արտահայտվելու հնարավորություն:

Զբույցը հնարավորություն է տալիս ճշտելու և ընդլայնելու երեխաների պատկերացումները ծանոթ առարկաների և երևույթների մասին: Այդ ընթացքում տեղի է ունենում թեմային առնչվող տեղեկատվության հաղորդում և մտքերի փոխանակում:

Թեմայի/կամ խմբի ներքին

Յուրաքանչյուր թեմային վերաբերող տարբեր նյութերը հնարավորություն են տալիս ճշտելու, ամրապնդելու, համադրելու և դասակարգելու շրջապատի մասին երեխաների պատկերացումները: Դրանք հիմնականում դասավորվում են թեմատիկ բաժիններով/օրինակ՝ կահույք, սպասք, փայտ, ապակի և այլն/:

Հավաքածուները կարող են լինել նաև անհատական և խմբային: Խմբային հավաքածուներ ստեղծելիս հարկավոր է անպայման հաշվի առնել ծրագրային պա-

հանջները և երեխաների հետաքրքրությունները: Դրանք լինում են ինչպես պատրաստի, այնպես էլ դաստիարակի և երեխաների ձեռքով պատրաստված /օրինակ՝ մեքենաների կամ փայտե խաղալիքների հավաքածու/: Անհատական հավաքածուներ պատրաստվում են ըստ անհատ երեխաների հետաքրքրությունների Տարբեր իրերի, քարերի, խաղալիքների, կոնկրետ բովանդակությամբ բացիկների տեսքով առարկայացված այդ հավաքածուները երեխաները հաճախ խմբավորում են փոքրիկ տուփերի կամ պարկի մեջ: Ցանկալի է ստեղծել ճանաչողական հմտությունները զարգացնող խաղաղարան և երեխաներին հնարավորություն տալ պարբերաբար ցուցադրելու իրենց հավաքածուները: Երեխաների ուժերով ստեղծած հավաքածուները հարստացնում են խաղի մեջ դրսևորվող իրենց իսկ ապրումները: Դա հրաշալի միջոց է՝ ակտիվացնելու և կատարելագործելու երեխաների իմացական ոլորտը:

Մանրակերտ

Մանրակերտը տարբեր առարկաների կամ ինչ-որ բանի փոքրացված մոդելն է, որը նպաստում է շրջապատի մասին երեխաների ունեցած պատկերացումների դասակարգմանը, հետաքրքրությունների շրջանակի ընդլայնմանը /թեմա՝ փողոց, մանկապարտեզ.../: Այստեղ մեծ է դաստիարակի օգնությունը: Կարևորվում է ոչ թե մանրակների քանակը, այլ դրանց շարժունակությունը և բազմագործառույթ բնույթը: Հաշվի առնելով այս տարիքի երեխաների առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է մանրակերտը «կենդանացնել» տարբեր գործողություններով ու գործունեության ձևերով /նկարչություն, ծեփ, ապլիկացիա, ձեռքի աշխատանք/: Երեխայի զարգացմանը զուգընթաց մանրակերտի բովանդակության փոփոխումը մեծացնում է երեխաների հետաքրքրությունների շրջանակը:

Ժամանկ

Ժամանկներն անցկացվում են եռամսյակը մեկ: Դրանք իրենց բովանդակությամբ տարբերվում են զվարճանքներից, որոնք անցկացվում են կրտսեր խմբում: Նման ժամանկների նպատակը շրջապատի մասին երեխաների պատկերացումների ամրապնդումն է և թեմային վերաբերող նոր ու հետաքրքիր տեղեկատվության հաղորդումը :

Ժամանկների թեման ընտրում է դաստիարակը՝ ելնելով խմբի երեխաների առանձնահատկություններից, ընդունակություններից ու հետաքրքրություններից:

Ավանդույթներ

Այդ տարիքից սկսած երեխաների շրջանում հարկավոր է մշակել ճանաչողական հետաքրքրությունների գծով որոշակի ավանդույթներ: Մանկական կոլեկտիվում ավանդույթի ներմուծումը աշխատանքի պլանավորված և հաջողությամբ կրկնվող ձև է /օրինակ՝ «Մեր հյուրերի պատմությունը»/: Դրա նպատակն է՝ ընդլայնել երեխաների ճանաչողական հետաքրքրությունների շրջանակը և մտահորիզոնը շրջապատող իրականության նկատմամբ: Որպես հյուր կարող են լինել մանկապարտեզի աշխատակիցները, տարբեր խմբերի երեխաները, ծնողները, հարազատները, անվանի մարդիկ, հեքիաթի հերոսները: Այցելությունները կարող են լինել ամիսը մեկ անգամ: Վերջիններս պատմում են հետաքրքիր պատմություններ իրենց կյանքի, շրջակա աշխարհի մասին:

Աշխատանքը կազմակերպելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

1. *Առաջադրվող տեղեկատվությունը պետք է կազմված լինի երկու մասից՝*
 - տեղեկություններ՝ երեխաներին շրջապատող իրականությունից,
 - տեղեկություններ, որոնք դուրս են երեխաների անմիջական ընկալումներից,
2. *հաշվի առնել երեխաների ակտիվությունն ու հետաքրքրությունների շրջանակը:*

Յուրահանդեսներ

Դաստիարակը կարող է կազմակերպել տարբեր թեմաներ ամփոփող ցուցահանդեսներ: Դրանց ակտիվ մասնակիցներից են նաև ծնողները: Յուրաքանչյուր ցուցահանդեսից առաջ հարկավոր է մանրակրկիտ պլանավորել ու համակարգել աշխատանքը:

Ճանաչողական զարգացմանը միտված գործունեության տարբեր ձևերի յուրահատկությունները պետք է պարզորոշ արտացոլվեն յուրաքանչյուր ցուցահանդեսի բովանդակության մեջ: Ցուցահանդեսը նույնպես երեխաների մտահորիզոնի ընդլայնման հրաշալի միջոց է: Այն կարելի է կազմակերպել ինչպես խմբի ներսում, այնպես էլ մանկապարտեզի տարածքում:

Գեղարվեստական գրականություն

Հայտնի է գեղարվեստական գրականության ազդեցիկ դերը երեխաների համակողմանի զարգացման գործում: Այն ոչ միայն փոքրիկին ձևավորում է որպես անհատ, այլև ընդլայնում է նրա մտահորիզոնը, հետաքրքրությունների շրջանակը, հարստացնում խոսքը և ձևավորում աշխարհայացք: Կրտսեր և միջին տարիքի երե-

խաները շատ են սիրում հեքիաթներ: Հեքիաթն ընթերցելիս կամ պատմելիս ստեղծագործության ամբողջական գեղարվեստական - հուզական ներգործությունն ապահովելուց հետո երեխաների իմացական ոլորտը զարգացնելու նպատակով պետք է նրանց ուշադրությունը հրավիրել երկուս արտահայտված առանձին պահերի ու դրվագների վրա:

Ներկայացնենք խոսքի զարգացման պարապմունքի նմուշօրինակ՝

«Հասարակական կյանքի երևույթներ» քեմատիկ քաժնից:

ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ

Ն պ ա փ ա կ ք

Ճշգրտել և ամրապնդել երեխաների գիտելիքներն «Ընտանիք» հասկացության վերաբերյալ: Տեղեկացնել նրանց, թե ովքե՞ր են երեխաների հարազատները: Դասակարգել պատկերացումներն ընտանիքի անդամների մասին՝ օգտվելով հարազատների նկարներից: Կարողանալ ստեղծագործել փոքրիկ պատմվածքներ՝ դրանց մեջ նշելով հարազատների անունը, ազգանունը, հայրանունը: Ներկայացման ընթացքում օգտագործել ընտանիքին վերաբերող ասացվածքներ և թևավոր խոսքեր: Չարգացնել կապակցված խոսքը: Դաստիարակել սեր և հարգանք ընտանիքի անդամների նկատմամբ:

Ա ն հ ր ա ժ ե չ փ պ ա փ ա գ ա ն ե ր

Մտվարաթոթից կամ կտորից պատրաստված ծառ՝ կանաչ ճյուղերով, լուսանկարներ:

Ը ն ր ա ց փ ք

Երեխաները նստում են կիսաշրջանաձև: Դաստիարակը նրանց ուշադրությունը հրավիրում է մի քանի ընտանեկան լուսանկարների վրա /առանձին նկարներ՝ տատիկի և պապիկի հետ, քույրիկի և եղբոր հետ/:

Դ ա ա փ ա փ ա կ ք

- Երեխանե՞ր, ովքե՞ր են պատկերված այս լուսանկարներում:
- Ի՞նչն է նրանց միացնում իրար:
- Ինչի՞ց որոշեցիք, որ այստեղ ընտանիք է պատկերված:

/Նկարներում պատկերված են ծնողները և երեխաները, մայրիկը և հայրիկը, քույր ու եղբայրը, տատիկը, պապիկը և բոռնիկները/:

- Ընտրե՞ք նկարներ, որոնք ձեզ ավելի շատ են դուր գալիս, և մտածե՞ք, թե ի՞նչ կարող եք պատմել նրանց մասին:

Բոլոր լուսանկարները երեխաների մեջ առաջացնում են բարի տրամադրություն: Մարդկանց քանակը լուսանկարներում տարբեր է, ընտանիքի կազմը՝ նույն-

պես /մի ընտանիք ապրել է շատ վաղուց, տասնյակ տարիներ առաջ, մյուսները մեր ժամանակակիցներն են/: Լուսանկարներում ծնողները քնքշորեն գրկել են երեխաներին, բոլորը ժպտում են:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է ընտանիքը:

- Ընտանիքում մարդիկ ապրում են միասին: Այնտեղ սիրում են մեկը մյուսին, հարգում են միմյանց, հոգ են տանում միմյանց նկատմամբ...: Ընտանիքը միավորում է հարազատներին, համախմբում ծնողներին և երեխաներին, տատիկներին ու պապիկներին, քույրերին և եղբայրներին: Այս մարդիկ մեր ազգականներն են, հարազատները:

Դասարանական՝ Ընտանիքը շատ քանկ ու կարևոր օղակ է յուրաքանչյուր մարդու համար:

Հիշենք մի քանի ասույթներ ընտանիքի մասին.

Արձարձն ու ոսկին զեռն հեռանում, հաշրն ու ծաղրն զբն զեռն ունենում:

Երեխաներն ընթանալիք ծաղիկներն են:

Ընթանալիք պտբուքան հիմքն է:

Ամբար ընթանալիք՝ ամբար պտբուքուն:

Այստեղ տեղին է անցկացնել քարնացնող վարժություն՝ օգտագործելով հետևյալ տիպի ոտանավորներ.

Այս ծաղիկն պապիկն է,

Այս ծաղիկն պապիկն է,

Այս ծաղիկն հաշրիկն է,

Այս ծաղիկն ծաղիկն է,

Այս ծաղիկն մեր փոքրիկն է,

Երա ահունը Աշուրիկ է:

Աշուրիկն ունի ամուր, համերաշխ ընտանիք, որովհետև բոլոր մատները միասին են և մի բռունցք են դարձել:

- Ինչպիսի՞ն պետք է լինի ընտանիքը:

- Համերաշխ, ամուր, աշխատասեր, հոգատար...:

- Երեխաներ, մենք օրվա մեծ մասն անցկացնում ենք մանկապարտեզում և սիրում ու հարգում ենք միմյանց: Մենք նման ենք համերաշխ ու գեղեցիկ ընտանիքի: Ուշադիր նայեք՝ մեզ մոտ գեղեցիկ ծառ է աճել /ցույց է տալիս նախապես պատրաստված ծառը, որը փակցված է վարագույրին/: Այս ծառը մեր խումբն է, իսկ

ճյուղերը՝ ձեր ընտանիքները: Չամբյուղում ձեր ընտանիքի անդամների նկարներն են: Չեզոք յուրաքանչյուրը պետք է գտնի իր հարազատների լուսանկարները և փակցնի համապատասխան ճյուղին: Հիմա մենք կտեղեկանանք, թե յուրաքանչյուրիդ ընտանիքում քանի մարդ կա: Կիմանանք նաև նրանց անունները /փորձը ցույց է տալիս, որ 4-6 տարեկան երեխաները վստահորեն ասում են իրենց ծնողների, տատիկների, պապիկների անունը, ազգանունը և հայրանունը, իսկ մյուս հարազատներին ոչ միշտ են մտաբերում/:

- Մա իմ պապիկն է: Նրա անունը Հայկ է, ազգանունը Պետրոսյան:
- Մա իմ տատիկն է: Նրա անունը Աշխեն է.....:
- Մա ե՛ս եմ՝ Տիգրան Լևոնյանը.....:

Պատմություն

- Երեխաներ, ես տեսնում եմ, թե ինչպիսի քնքշությամբ ու սիրով եք դուք հիշատակում ձեր հարազատների անունները: Ծնորհակալություն՝ն այդ ամենի համար: Թեմատիկ պարապմունքներ կարելի է անցկացնել նաև կերպարվեստից:

Նկարչություն

«Աշխարհի ամենալավ հայրիկը», «Իմ մայրիկի դիմանկարը», «Իմ ընտանիքը», «Բարև՝ Ձեզ, սա ե՛ս եմ»...:

Ծեփ

«Լարդեր մայրիկի համար», «Իմ հայրիկը», «Տատիկը և պապիկը», «Ընտանեկան դիմանկար»...:

Ապշխարություն

Տոնական բացիկների պատրաստում՝ ազգային բանակի՝ հայրենիքի պաշտպանության օրվան նվիրված և Մարտի 8-ի կապակցությամբ:

Կատուցողական աշխատանք

Թղթից, ստվարաթղթից և այլ նյութերից կառուցել «Իմ տունը», «Գեղեցիկ կահույք իմ տան համար»...:

Հավատացած ենք, որ նշված թեման կհետաքրքրի շատերին, և հետագայում թե՛ մանկավարժները, թե՛ ծնողներն էլ ավելի կկարևորեն այս ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը:

Լալա Սմբատյան
*ԿԱԻ նախադպրոցական և տարրական
կրթության բաժնի մասնագետ*

ԵՐԵՎԱՆԸ ԻՄ ՏՈՒՆՆԷ

Խոսքի զարգացում և հայրենասիրական դաստիարակություն

Երեխայի լիարժեք զարգացման համար կարևոր պայման է խոսքը, որի կատարելագործմանն ու հարստացմանը օժանդակում է համապատասխան խոսքային միջավայրը: Այն միաժամանակ ծառայում է երեխայի հետաքրքրությունների ու պահանջների բավարարմանը: Մենք մեր առջև նպատակ ենք դրել ստեղծել առարկայական զարգացնող միջավայր և դրա մոդելավորման տարբերակները, որոնք հնարավորություն կընձեռեն՝ յուրաքանչյուր երեխայի մեջ արթնացնելու հետաքրքրություն **խոսքի** նկատմամբ:

Խոսքի զարգացումը կապված է ծրագրի մյուս բաղադրիչների հետ: Ծրագրային որոշակի խնդիրներ լուծվում են խոսքի զարգացման և մեկ այլ/ օրինակ, «Երաժշտություն», «Խաղ», «Կերպարվեստ»/ բաժնի հետ ինտեգրման համատեքստում՝ գերակա խնդիր դարձնելով խոսքի զարգացումը:

Նախադպրոցական հաստատության բազում նպատակներից մեկն էլ հայրենասիրական դաստիարակությունն է: Յուրաքանչյուր երեխայի համար հայրենիք հասկացությունն անմիջաբար զուգորդվում է իր տան, մանկապարտեզի, բակի, ծառ ու ծաղկի ու հայրենի քաղաքի հետ: Մանկապարտեզում երեխաներին սովորեցնում ենք ճանաչել երկրի դրոշը, ազգային ավանդույթները: Վարժեցնում ենք մասնակից լինել ժողովրդական ծեսերին: Ջանում ենք երեխաների գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ հայրենիքը մեկն է, ուստի չի կարելի այն լքել: Հարկավոր է միշտ պաշտպանել հայրենիքը:

Մեր մանկապարտեզում ավանդաբար իրականացվում են հետևյալ միջոցառումները՝ «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը, սեպտեմբերի 21՝ անկախության և ինքնորոշման օրը, հունվարի 28՝ Հայոց բանակի ստեղծման օրը, հունիսի 5՝ երկրի մայր օրերնքի՝ սահմանադրության օրը և այլն: Ուսումնական տարվա ավարտին ավագ խմբում անցկացնում ենք ծնողների համար պարապմունք՝ **«Երևանն իմ տունն է»** թեմայով:

Ստորև ներկայացնում ենք այդ պարապմունքի նկարագրությունը:

Նպատակները

Հստակեցնել և ամրակայել երեխաների գիտելիքները՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ:

Կրթական

Ճանոթացնել երկրի դրոշին, զինանշանին, օրհներգին, Երևանի տեսարժան վայրերին, հուշարձաններին/նկարների մջոցով/:

Դաստիարակչական

Արթնացնել հայրենասիրական զգացումներ և հետաքրքրություն Երևանի անցյալի ու ներկայի նկատմամբ, ինչպես նաև գիտակցական վերաբերմունք ձևավորել քաղաքը մաքուր պահելու առումով:

Ձարգացնող

Ձարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, կոփել հիշողությունը: Երեխաներին սովորեցնել նաև օգտվել տեխնիկայից:

Անհրաժեշտ պարագաներ

ՀՀ դրոշը, զինանշանը, DVD, Երևանի մասին երգեր պարունակող ձայնասկավառակներ: Խճանկար՝ Երևանի տեսարժան վայրերը:

Նախապատրաստական մաս

Կազմակերպել էքսկուրսիա դեպի Երևանի տեսարժան վայրեր: Սովորեցնել երգեր, ոտանավորներ: Մայրենի լեզվի պարապմունքի ժամանակ պարբերաբար անդրադառնալ հայրենիքի թեմային:

Ընթացքը

Աթոռակները դասավորված են կիսաշրջանաձև:

Դաստիարակ

- Այսօր մեր պարապմունքն սկսելու ենք շատ հետաքրքիր աշխատանքով: Նախ եկեք միացնենք Գրատախտակին արված կետագծերը և տեսնենք՝ ինչ բառ ենք ստանում: (3-4 երեխա աշխատում են, իսկ պատկերագիրը կարդում է խումբը՝ *Երևան*): Եկե՛ք բոլորս միասին մետրո նստենք և ճանապարհորդենք՝ կանգ առնելով յուրաքանչյուր կայարանում: (Հնչում է Օֆ. Մկրտչյանի «Իմ քաղաք» երգի երաժշտությունը, իսկ երեխաները վագոններ կազմած նստում են կիսաշրջանաձև տեղադրված աթոռակներին):

Դաստիարակն ազդարարում է՝ «Առաջին կայարան՝ **Պատմական**»:

Մոտենում են մի քանի երեխա, միացնում տեսանյութը և սկսում պատմել.

-Երևանը շատ հին քաղաք է: Այն հիմնադրվել է 2790 տարի առաջ, Ուրարտական Արգիշտի քազավորի օրոք և կոչվել Էրեբունի: Ամեն տարի հոկտեմբեր ամսվա 2-րդ կիրակին նշում ենք մեր մայրաքաղաքի ծննդյան օրը:

Դաստիարակ

-Երկրորդ կայարան՝ «Հայրենիք»: Ինչ էք հասկանում հայրենիք ասելով: Երեխաները ներկայացնում են.



-Հայրենիքը մեր հողն ու ջուրն է, որտեղ մենք ծնվել և մեծանում ենք: Այստեղ ապրում են մեր ծնողները, հարազատները:

-Դա մեր մանկապարտեզն է, մեր ընկերները, մեր բակի ծառերը, հպարտ Մասիսն է, Արագած լեռն է, Սևանա լիճն է:

-Մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունն է: Մայրաքաղաքը՝ Երևանը, մենք հայ ենք:

Երեխա Մեր հայրենիքի խորհրդանիշներն են Հայաստանի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը: (Յուցադրում է հեռակառավարման վահանակի օգնությամբ և պատմում): Զինանշանը ամրացված է կառավարական շենքերի ճակատային մասում, հանդիպում ենք նաև մետաղադրամների, կնիքների վրա:

Դաստիարակ

- Ճիշտ է, երեխաներ: Այս արծիվը խորհրդանշում է, որ մենք իմաստուն ժողովուրդ ենք, առյուծը՝ ուժեղ ենք: Պատկերված են 4 հայկական քաղաքությունները՝ Արտաշեսյան, Բագրատունիների, Արշակունիների, Ռուբինյան: Մեջտեղում Արարատ սարն է, վրան ջրհեղեղից փրկված Նոյյան տապանը: Ներքևում՝ ցորենի հասկերն են շղթայով միաձուլված:

Երեխա

- Սա մեր պետության եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն: Այն ամրացված է քաղաքապետարանի, կառավարական շենքի վրա, այն բարձրացվում է սպորտային հաղթանակների ժամանակ (Հնչում է հիմնը, բոլորը ոտքի են կանգնում):

Դաստիարակ

-Երբորդ կայարան՝ «Գեղարվեստական»:

Երեխաները արտասանում են, երգում հայրենիքի, սիրելի քաղաքի մասին:

Մ. Կապուտիկյան

- Իմ Հայաստան,
- Իմ Հայրենիք,
- Երկնքի չափ սիրում եմ քեզ
- Ես դեռ փոքրիկ, շատ եմ փոքրիկ,
- Բայց արդեն շատ բան գիտեմ ես:
- Երևանում ծնվեցի,
- Երևանում մեծացա,
- Նրա հողով սնվեցի,
- Նրա ջրով մեծ դարձա:
- Շատ կան ուրիշ քաղաքներ,

*Բայց այստեղ է տունը մեր,
Երևանը ինձ համար
Քաղաքների մայրն է մայր:*

Կատարվում է Լ. Չալինյանի «Իմ Երևան» երբ:

Դաստիարակ

– Չորրորդ կայարան՝ «Քաղաքային»: Ի՞նչ եք հասկանում քաղաք ասելով:

Երեխա

-Քաղաքը մի մեծ տարածք է, ուր ապրում են շատ մարդիկ: Կանայք, տղամարդիկ մեծ քաղաքացիներ են, իսկ մենք՝ փոքրիկ բնակիչներ:

Երեխաներ

- Քաղաքն ունի բնակելի բազմահարկ շենքեր, պուրակներ, քանգարաններ, ինստիտուտներ, դպրոցներ, մանկապարտեզներ և հուշարձաններ:

- Մենք ապրում ենք Երևան քաղաքում, և մեր քաղաքի հատակագծի հեղինակը՝ ճարտարապետ Ալ. Թամանյանն է:

Այս ընթացքում մի խումբ երեխաներ հավաքապատաստառի վրա տեղադրում և ամբողջացնում են քաղաքի հուշարձանների խճանկարները: Վերացական մոդելներից ստացվում է Երևանի համայնապատկերը:

Դաստիարակ

– Ի՞նչով է գեղեցիկ քաղաքը:

Երեխա

- Քաղաքը գեղեցիկ է իր բնակիչներով... մարդիկ որքան գեղեցիկ են ժպտում, այնքան գեղեցկանում է մեր քաղաքը: Եթե բնակիչները մաքրասեր են, ապա մաքուր է քաղաքը:

Դաստիարակ

– Ի՞նչ պետք է անել, որ մաքուր մնա մեր Երևանը:

Երեխա

-Ծառերը, ծաղիկները մաքրում են քաղաքի օդը: Չի կարելի ոչնչացնել նրանց: Գետնին կոնֆետի քոթեր, արևածաղկի սերմեր չի կարելի թափել:

Դաստիարակ

– Հինգերորդ՝ վերջին կայարան՝ «Տեսարժան վայրեր»:

Երեխաները հեռակառավարման վահանակի օգնությամբ ցուցադրում են Երևանի տեսարժան վայրերը և պատմում դրանց մասին: Մատենադարան, Ծիծեռնակաբերդ, Օպերայի շենք, Հյուսիսային պողոտա, Մանկական երկաթուղի, Կարապի լիճ, կենդանաբանական այգի, երգահան Կոմիտասի, Առնո Բարաջանյանի,

Արամ Խաչատրյանի, նկարիչ Մ. Սարյանի արձաններ: Նրանք հիշատակում են մահ մահակական սրճարանները՝ «Պիմոկիո», «Ջիզիկի-Բիզիկի», «Առլեքին»:


Եզրափակիչ մաս

Դաստիարակ

- Այսօր մենք բացեցինք մի շատ գեղեցիկ թեմա, որ վերաբերում էր մեր հայրենիքին և մեր սիրելի քաղաքին: Ես վստահ եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը կարող է էքսկուրսիա անցկացնել մեր քաղաք ժամանած օտարերկյա հյուրերի համար:

Երեխաները Երևանի մասին ուրախ երգ կատարելով անցնում են արվեստի կենտրոն՝ պատկերելու Երևանի՝ իրենց սիրելի տեսարժան վայրը :

“Երևանը իմ տունն է” թեմատիկ պարապմունք



Գայանե Թերլեմեզյան
 Երևանի թիվ 8 ՆՈՒՀ-ի մեթոդիստ

ՀԱՄԱԼԻՐ ՊԸՉԸՊՄՈՒՆԻՔՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԸՆ

ԿԸՋՄԸԿԵՐՊՄԸՆ ԸՐԴՅՈՒՆԸՎԵՑ ՁԵՎ

Մանկապարտեզի երեխաների օրվա կանոնակարգում իրենց ուղղակի տեղն ունեն ուսումնական պարապմունքները: Պարապմունքների միջոցով երեխաները տիրապետում են որոշակի գիտելիքների և կարողությունների, որոնք չեն կարող յուրացվել ինքնաբուխ խաղերի, մեծերի հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:

Ուսուցման կազմակերպման բավականին արդյունավետ ձևերից են համալիր պարապմունքները, որոնք իրենց մեջ ներառում են երեխաների կողմից կատարվող տարրեր գործողություններ մեկ թեմայի շրջանակներում:

Համալիր պարապմունքների ընթացքում երեխաները գտնվում են ակտիվ վիճակում և չեն ձանձրանում: Դաստիարակի կողմից աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում երեխաները ամբողջ պարապմունքի ընթացքում մեկ գործողությունից անցնում են մեկ այլ գործողության: Պայմանականորեն համալիր պարապմունքը կարելի է բաժանել երեք մասի, որոնցից յուրաքանչյուրը լուծում է երեխաների զարգացման և դաստիարակության հետ կապված տարրեր խնդիրներ:

Առաջին մասում դաստիարակը հատակեցնում և ընդհանրացնում է երեխաների կարողությունները: Ցանկալի է դիմել խաղային հնարների: Երկրորդ մասում երեխաները կարող են կատարել դիտումներ, հետազոտություններ, կամ այլ գործնական աշխատանքներ, որոնց արդյունքում նրանք կհանգեն ուսուցանող թեմայի վերաբերյալ որոշակի եզրակացության:

Երկրորդ մասում նախընտրելի է, որ երեխաները զբաղվեն կերպարվեստային աշխատանքով, որը կնպաստի նրանց ստեղծագործական կարողությունների և երևակայության զարգացմանը:

Համալիր պարապմունքները հնարավորություն են ստեղծում բացահայտելու և զարգացնելու բարոյահոգեբանական հատկություններ՝ պատասխանատվություն, բարյացակամություն, ինքնուրույնություն:

Ինչպե՞ս անել, որ համալիր պարապմունքը երեխաներին ոչ միայն հմտություններով և կարողություններով զինի, այլև նաև առաջացնի բուռն հետաքրքրություն ու ձևավորի ստեղծագործական մտածողություն: Ներքոհիշյալ խորհուրդները կարող են օգնել դաստիարակին՝ նախապատրաստելու այդպիսի պարապմունք:

- Որոշել և ձևակերպել պարապմունքի թեման:



- Հստակ ձևակերպել պարապմունքի նպատակային ուղղվածությունը. կոնկրետ ինչի՞ համար է պետք այդ պարապմունքը: Այդ առումով հարկավոր է հստակեցնել պարապմունքի ուսուցանող, դաստիարակող և զարգացնող գործառույթները:

- Մտածել նոր նյութի մատուցման համար հետաքրքրաշարժ մուտք: Այն պետք է առաջացնի երեխայի հետաքրքրությունը, զարմանքը և հիացմունքը:

- Նախապատրաստել դիդակտիկ նյութեր և ստեղծել համապատասխան միջավայր:

- Խմբավորել ընտրված ուսումնական նյութը: Մտածել, թե ինչ հաջորդականությամբ կտարվի աշխատանքն ուսումնական նյութի շուրջ, ինչպես կիրականացվի երեխաների գործողությունների հաջորդականությունը: Խիստ կարևոր է նյութը խմբավորելիս ընտրել պարապմունքի կազմակերպման այնպիսի ձև, որի ընթացքում երեխաները կցուցաբերեն ակտիվ գործունեություն:

- Պատրաստել պարապմունքի սեղմագիրը:

Պարապմունքի պլանավորման քայլերը

1. Ներկայացնել պարապմունքի թեման
2. Նպատակի ձևակերպում /այս բաժնում տրվում է ցանկալի արդյունքի սահմանումը/:
3. Անհրաժեշտ նյութերը
4. Պարապմունքի ընթացքը /ներկայացվում են աշխատանքի ընդունելի տարբերակներ, զանազան մեթոդների կիրառմամբ/
5. Ընկալման մակարդակի ստուգում /կատարվում է լուսաբանում՝ խաղի, գործնական աշխատանքի միջոցով/
6. Ամփոփում և եզրափակում

ԸՆՏԱՌԻ ԲՆԵԿԻՉՆԵՐԸ

Համային պարապմունք

Նպատակները.

Կրթական

Ամրապնդել երեխաների գիտելիքները՝ անտառի, նրա բազմազանության, բնակիչների առանձնահատկությունների մասին: Վարժեցնել 10-ի սահմանում թվանշաններով թվաբանական գործողությունների կատարմանը: Գումարել, հանել, համեմատել մի քանի թվեր:

Կազմել բառեր տրված տառերով:

Չարգացնող

Չարգացնել երեխաների կապակցված խոսքը, հիշողությունը, մտածողությունը:

Դաստիարակչական՝

Դաստիարակել կոլեկտիվ աշխատանքի հմտություններ:

Ձևավորել սեր բնության հանդեպ:

Նյութեր պարապմունքի համար

Ձայներիզ՝ «Անտառի ձայներ», մագնիսական գրատախտակ, անտառի կանոնների պատկերներ, անտառի պատկերը մեծ պաստառի վրա, կենդանիների, թռչունների, միջատների նկարներ, 1-10-ը թվանշանների 6 հավաքածու, տառերի հավաքածու երեխաների թվով, ծաղիկների, բանջարեղենի, մրգերի, հատապտուղների պատկերներով 6 քարտեր:

Ընթացքը

Երեխաներն ունկնդրում են անտառային ձայներ/համապատասխան ձայնագրություն/: Այնուհետև հայտնում իրենց կարծիքները: Պատասխաններն ամփոփելուց հետո դաստիարակն առաջադրում է հետևյալ հարցերը:

- Անտառում ամենից շատ ի՞նչն է ձեզ դուր եկել:
- Ինչո՞ւ են ասում, որ անտառը մեր հարստությունն է:
- Ինչպե՞ս պետք է պահպանել անտառը:

Ցուցադրվում են համապատասխան պատկերներ և երեխաները հիշատակում են անտառի պահպանմանը վերաբերող կանոններ:

Երեխաների ուշադրությունը հրավիրվում է անտառի նկարի վրա: Նրանք պետք է ցույց տան և անվանեն նկարում պատկերված ծառատեսակները, քիերն ու ծաղիկները:

Գաստիարակը հարցնում է, թե ովքեր են անտառի բնակիչները: Պատասխանները լսելուց հետո առաջարկվում է կենդանիների մասին հանելուկներ: Կենդանիների պատկերները տեղադրվում են անտառի պատանի վրա՝ ըստ երեխաների տված պատասխանների:

Երեխաներն անվանում և նկարի վրա տեղադրում են անտառում ապրող թռչունների, միջատների նկարներ: Նրանք հաշվում են նաև պատանի վրա տեղադրված կենդանիների, թռչունների, միջատների քանակը և մագնիսական գրատախտակին ամրացնում համապատասխան թվանշանները: Կատարում են թվանշանների համեմատում, հանման և գումարման գործողություններ:

Ֆիզկուլտ- դադար


Շարժումներով ցույց է տրվում բույսի աճը:

Գործնական աշխատանքներ

ա) Ենթախմբերին տրամադրվում են պատկերներով քարտեր և թվանշանների հավաքածու: Երեխաները պետք է հաշվեն պատկերները և քարտի վրա տեղադրեն համապատասխան թվանշանները: Խմբից մեկը ներկայացնում է կատարած աշխատանքը:

բ) Տրվում են **ոզնի, լորիկ, գորտ, ձկնիկ, թիթեռ, զատիկ** բառերի և տառերի հավաքածուներ: Խմբի յուրաքանչյուր անդամ կազմում է այն բառը, որն արտահայտող նկարը դրված է սեղանին: Յուրաքանչյուր խումբ կարդում է իր կազմած բառերը:

Պարապմունքի ընթացքում ձեռք բերած գիտելիքները վեր հանելու նպատակով կարելի է անցկացնել «Գուշակի՜ր՝ ո՞վ է» և «Հարց ու պատասխան» խաղերը:



Կարինե Մկրտչյան

Կապանի թիվ 6 ՆՈՒՀ-ի դաստիարակ



Վաղ տարիքը երեխայի կյանքի կարևոր փուլերից է: Մեծ է տարիքային այս շրջանի նշանակությունը երեխայի հետագա զարգացման համար: Այդ հիմքի վրա է ձևավորվում մարդը:

Վաղ տարիքում տեղի է ունենում հոգեֆիզիոլոգիական բոլոր գործընթացների արագընթաց զարգացում, ձևավորվում է սոցիալական վարքը: Այդ տարիքը համարվում է շրջապատող աշխարհի զգայական ընկալման շրջան և բնորոշվում է զգայական գործընթացների բուռն զարգացմամբ: Զգայական գործընթացների սաղմնային զարգացումն ապահովում է հուզական աշխարհաճանաչումը և նպաստում առարկայական աշխարհի անմիջական ընկալմանը:

Վաղ տարիքի երեխայի զարգացման կարևոր պայման է նրա հուզական հաղորդակցումը մեծահասակի հետ: Սիրելու ընդունակությունը ծնվում է ընտանիքում մեծահասակի և երեխայի փոխադարձ հաղորդակցման, հուզական շփումների հիման վրա: Մեծահասակի քնքուշ հպումները, ջերմությունը, բարեհունչ ձայնը երեխայի մեջ ստեղծում են մտերմիկ ու հաճելի զգացումներ և ուրախություն պատճառում նրան: Դեռևս կյանքի առաջին ամիսներից անհրաժեշտ է ուշադիր նայել երեխայի աչքերի մեջ, ժպտալ, ասել անունը, ջերմորեն զգվել նրան: Նման վերաբերմունքի հաճախակի կրկնության արդյունքում երեխան նույն կերպ է պատասխանում մեծահասակին: Պատասխանելով երեխայի գեղգեղանքին մեծահասակը կրկնում է այն, պահպանելով խոսքային առոգանությունը: Որոշ ժամանակ անց երեխայի հնչարտարերման և նույնիսկ լացի մեջ նկատվում են տարբեր ինտոնացիաներ՝ խնդրանք, պահանջ, ցանկություն և այլն:

Հուզական վերաբերմունքն ու խոսքը զուգակցելով՝ դաստիարակը կամ ծնողը դիմում է երեխային. «Մանեն ինչու՞ է տխուր, ի՞նչն է ցավում»: Այնուհետև շոյելով

նրան և ժպտալով՝ շարունակում է. «Մանեի հետ ամեն ինչ կարգին է, ոչ մի տեղը չի ցավում »: Երեխան պատասխանում է ուրախ ժպիտով: Մեծահասակը տարբեր ձևերով /միմիկա, շոյանք, մեղմ ձայն/, ինչպես նաև խաղերի միջոցով արտահայտում է իր սերն ու բարյացակամ վերաբերմունքը երեխայի հանդեպ՝ կիսելով նրա ուրախությունն ու տխրությունը:

Վաղ տարիքին բնորոշ է մեծահասակների հետ հաղորդակցման ընթացքում աստիճանաբար ձեռք բերվող սոցիալական փորձը: Այն դրսևորվում է բավականին ակտիվությամբ: Այս ամենի իրականացման լավագույն միջոցը առարկայական գործունեությունն է և դրա հիման վրա ձևավորված խաղերը: Դրանք ուղղորդվում են մեծահասակի կողմից և լինում են ուսուցանող, զարգացնող, զվարճալի:

Խաղում ենք պահմտոցի

Մեծահասակը անձեռոցիկով փակում է դեմքը և հարցնում երեխային. «Ո՞ր է մայրիկը, ու՞ր գնաց նա»: Այնուհետև բացում է աչքերը և ժպտում: Դա երեխային մեծ ուրախություն է պատճառում: Շուտով երեխան կրկնում է նույն գործողությունը է՝ դեմքը փակելով ձեռքերով: Խաղը կարելի է կազմակերպել տարբեր խաղալիքներով: Երեխայի մեջ մեծ հետաքրքրություն է առաջացնում քաբցված խաղալիքը գտնելը: Դրանից հետո ինքն է քաբցնում խաղալիքը և առաջարկում գտնել այն:

Երեք տարեկանում երեխան ինքը կարող է պահմտոցի խաղալ տանը, բակում, այգում: Այդ ընթացքում կարելի է նրա համար արտասանել որևէ փոքրիկ ոտանավոր, օրինակ՝ Ս.Կոպուտիկյանի «Լալան ու՞ր է » ոտանավորը.

*Լալան ո՞ր է, Լալան ո՞ր է,
Չայն չի տալիս, ինչ էլ լուռ է,
Տեսնես այդ ո՞ր է գնացել,
Թե՞ սենյակում քաբ է կացել,
Պահարանի մե՞ջ է պահվել,
Վարագույրո՞վ է ծածկվել,
Սեղանի տա՞կն է երևի.
Լալա, ու՞ր ես, դե՛ դուրս արի:*


Այս տարիքի երեխայի համար դժվար չէ ուսումնասիրել այն, ինչն իրեն հետաքրքրում է, և պետք չէ անհանգստանալ այդ ընթացքում նրա ծախսած էներգիայի համար: Շատ ունակություններ և կարողություններ հնարավոր չէ հետագայում ձեռք բերել, եթե դրանք չեն ձևավորվել վաղ մանկության շրջանում:

Մանկավարժների, հոգեբանների, նախադպրոցական կրթության մասնագետների ուսումնասիրությունները միշտ էլ ուղղված են եղել այն խնդրի կարգավորմանը, թե

ինչպես զարգացնել մանկիկին, ինչպես հասկանալ նրան, ինչպես սիրել, խաղալ նրա հետ և այլն:

Վաղ տարիքի երեխայի համակողմանի դաստիարակության գործում մեծ նշանակություն ունեն մեծահասակների հետ կազմակերպվող հուզական խաղերը: Դրանք երեխայի մեջ առաջացնում են մտերիմների հետ շփվելիս ուրախության զգացում, անհրաժեշտ պայմաններ են ստեղծում երեխայի ուսուցման և դաստիարակության համար: Հուզական խաղերը հաղորդակցման առանձին ձև են համարվում: Երեխայի վրա առավել հուզական ազդեցություն են ունենում երաժշտական խաղերը: Խաղերի հետ զուգակցվող երաժշտությունը սկզբնական շրջանում լինում է օրորոցային, այնուհետև մեկ տարեկանից երեխաներին կարելի է լսել նաև դասական երաժշտություն: «Ինչը ինչպիսի ձայն է հանում» խաղն այս տարիքի երեխայի առաջին երաժշտական խաղն է: Մեծահասակը տարբեր ձայներ արձակող խաղալիքների օգնությամբ երեխային ծանոթացնում է տարբեր ձայների հետ: Անհրաժեշտ է յուրաքանչյուր նոր ձայն արձակող առարկա երեխայի լսողական ընկալմանը վարժեցնել առանց շտապելու: Հետզհետե, 1-2 տարեկան երեխան մեծ բավականությամբ է ունկնդրում մանկական երգերը և փոքրիկ բեմականացումները, սիրում է երաժշտության ներքո կատարել պարային շարժումներ: Հաճախակի անհրաժեշտ է երգել երեխայի համար, պայմաններ ստեղծել երաժշտության ունկնդրման համար, սովորեցնել շարժվել երաժշտության ռիթմին համապատասխան: Դրական հուզական վիճակը նպաստում է երեխայի ակտիվ զարգացմանը: Անհրաժեշտ է երեխայի համար ընտրել փոքրիկ մեղմիկ ստեղծագործություններ, որտեղ հատակ ներդաշնակում են խոսքն ու երաժշտությունը: Ցանկալի է ընտրել ժողովրդական երգեր:

*Արև, արև , եկ, եկ
 Ձիգի քարին վեր եկ,
 Սև-սև ամպեր հեռացեք,
 Արևին ճամփա տվեք:
 Լուսի՛ն, լուսի՛ն, լուսերես,
 Ինչ սիրուն ու կլոր ես,
 Լույս ես տալիս գիշերով
 Քո վառվորուն բշերով:
 Հավի՛կ, հավի՛կ, աներես,
 Տատին արի՛ր սևերես,
 Այ դու, բկլիկ, խատուտիկ,
 Սարոն ուտի քո տոտիկ:*



Ձայնով, շարժուձևով, առողջանությանը, նուրբ զգվանքով մեծահասակը երեխային է փոխանցում իր սերը: Արձագանքելով նրա հուզական իրավիճակներին՝ նրան ձերբազատում է բացասական հույզերից: Մեծերի և երեխաների փոխկապվածությունը երեխայի համար դառնում է մեծերին ընդօրինակելու, ունակությունների ձեռքբերման անհրաժեշտ պայման: Վեց ամսականից սկսած՝ մեծ դեր են խաղում հուզական խաղերը: Դրանք հիմք են գործունեության բոլոր ձևերի զարգացման և երեխայի հոգեկան գործընթացների ձևավորման համար/«Ծափիկ- ծափիկ, «Ծափ- ծափ արա», «Խնոցի- հարոցի և այլն»/:

2-3 տարեկան երեխաները սիրում են շարժվել երաժշտության ներքո: Սկզբնական շրջանում, հետևելով մեծահասակների շարժումներին, երեխաները փորձում են նմանվել նրանց, այնուհետև ներգրավվում են երաժշտական շարժախաղերի մեջ: Խաղի ընթացքում, մտնելով որևէ հերոսի կամ կենդանու կերպարի մեջ, քաջ պատկերացնում են այդ կերպարը, զարգանում է ընկալունակությունը: Երաժշտության ներքո երեխաները սկզբում կատարում են նմանողական /իմիտացիոն/ շարժումներ, կրկնում երգի ինտոնացիան, օրինակ՝ «նապաստակները», «զնացք», «իմ ուրախ գնդակ», «թռչունները թռչում են» շարժախաղերի ընթացքում երեխաները նմանակում են հերոսներին համապատասխան հնչարտաբերմամբ՝ ներկայացնելով դրանց ձայները:

Երեխայի կյանքում ներառելով տարբեր երաժշտական խաղեր, փոքրիկ երգեր՝ օգնում ենք նրան լինել ակտիվ, կենսախիճիկ և ուրախ: Դա հնարավորություն է տալիս երեխային հաջորդ տարիքային փուլում լիարժեք ընկալել և հուզականորեն արձագանքել երաժշտական տարբեր ստեղծագործություններին:

2-4 տարեկանում սկսում են ձևավորվել նաև բարոյական զգացմունքներ: Նախնական շրջանում դրանք հիմնականում կրում են դիմացինին գոհացնելու, նրա ցանկությունները, պահանջները բավարարելու բնույթ: Օրինակ՝ 2.5 տարեկան երեխան կարող է մորը հպարտորեն ասել, որ ինքը չի կերել այն կոնֆետը, որը մայրը բույլ չի տվել և այլն: Տեսնելով մեծահասակի խիստ, դժգոհ հայացքը այն բանի նկատմամբ, որ ինքը մատը տարել է բերանը՝ երեխան, ամոթից կարմրելով, դադարեցնում է այդ գործողությունը:

Այսպիսով՝ հուզական դրսևորումները կատարում են նաև կարգավորիչ գործառույթներ: Երեխան սկսում է հասկանալ, թե ինչն է հակասում կամ համապատասխանում շրջապատող մարդկանց պահանջներին:

Վաղ տարիքի երեխաների ծնողների հետ ունեցած գրույցի արդյունքում պարզվեց, որ նրանք մեծ ցանկություն ունեն, որ իրենց երեխաները մանկապարտեզ

հաճախեն 2 տարեկանից: Այստեղ առկա է մի կարևոր դրդապատճառ՝ երեխան կմեծանա հասակակիցների միջավայրում, ինչպես նաև, ըստ ծնողների՝

- Այստեղ նրանց օրը հագեցած է, նրանց հետ զբաղվում են /պարապմունքեր, շարժախաղեր, ցերեկույթներ/

- Իմ աղջիկը սկսել է ավելի լավ և ճիշտ խոսել: Երբ եկանք մանկապարտեզ, նա համարյա չէր խոսում, իսկ հիմա երգում է , պարում, արտասանում:

- Իմ երեխան շատ միայնակ էր, իսկ հիմա խաղում է հասակակից երեխաների հետ, խաղի մեջ դեր է կատարում:

Մանկապարտեզում դաստիարակի օգնությամբ երեխան սովորում է հարաբերություններ հաստատել հասակակիցների հետ, հուզական, այնուհետև խոսքային հաղորդակցման մեջ մտնել նրանց հետ և կարողանալ դուրս գալ կոնֆլիկտային իրավիճակներից: Հետաքրքիր է, որ կյանքի 3-րդ տարվա վերջին երեխաների մեջ ի հայտ է գալիս հումորի զգացումը: Դա տեղի է ունենում նրանց ծանոթ առարկայի հետ անսովոր գործողությունների արդյունքում, օրինակ՝ շնիկի՝ չափից մեծ գլխարկը, պարող տիկնիկը: Փոքր կենսափորձի պատճառով երեխային զվարճանք է պատճառում առարկայի կամ երևույթի արտաքին դրսևորումը: Օրինակ՝ երեխան կարող է ծիծաղել հանկարծակի ընկնող մեծահասակի վրա:

Անհրաժեշտ է երեխաների մեջ զարգացնել ոչ միայն դրական հաճելի հույզեր, այլև այնպես դաստիարակել, որ նրանց հասանելի լինեն իր վատ արարքի դեպքում՝ ամոթի, ուրիշի անհաջողության դեպքում՝ կարեկցանքի և տխրության հույզեր:

Այսպիսով, կյանքի 3-րդ տարվա վերջին դաստիարակչական համապատասխան աշխատանքի արդյունքում, երեխան ունենում է հույզերի և ապրումների դրսևորման բավական հարուստ փորձ ու պաշար:

Ադրինն Գալոյան

Երևանի թիվ 59 ՆՈՒՀ-ի տնօրեն

Օգտագործված գրականություն

1. Է. Ա. Ալեքսանդրյան, Մեր երեխան, Երևան, 1990թ.:
2. В.В.Ветрова, Во что играть с ребенком до 3 лет, Москва, 2008.
3. Е.С. Демина, Развитие и обучение детей раннего возраста в ДОУ, Москва, 2008.



ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Առողջություն հնարավոր չէ գնել, դրանով հնարավոր է վարձահատույց լինել:
Ս. Կոխախյ

Առողջությունը նույնքան վարակիչ է, որքան հիվանդությունը:
Ռ. Ռոլան

Եթե վատառողջ ես, մտածիր որևէ այլ բանի մասին:
Է. Բենսոն

Նախ պարզենք, թե ինչ ենք հասկանում *առողջություն* ասելով:

Տարբեր գիտնականներ տվյալ հարցին մոտեցել են տարբեր տեսանկյուններից: Որոշ հոգեբաններ, Ֆրանսիացի մեծ գրող Ռոմեն Ռոլանի դիպուկ ձևակերպմանը համապատասխան, գտնում են, որ *մանկավարժի «առողջությունը»* վարակիչ է աշակերտների համար: Իսկ ի՞նչ ենք հասկանում *մանկավարժի մասնագիտական առողջություն* ասելով: Կարելի՞ է, արդյոք, անձնային հատկությունները և մասնագիտությունը համատեղել այնպես, որ մանկավարժը համարվի *մասնագիտորեն առողջ*: Անշուշտ, իր գործում հաջողակ և անձնական կյանքում երջանիկ մանկավարժն է համարվել *մասնագիտորեն առողջ*: «Առողջությունը» բարդ և բովանդակային առումով բազմակի մեկնաբանում ունեցող հասկացություն է: Այն ներառում է թե՛ կենսաբանական, թե՛ սոցիալական և թե՛ հոգեբանական ու հոգեկան տեսանկյուններ: *Հոգեբանական առողջությունն* անձի բազմամակարդակ և ինտեգրատիվ բնութագիրն է: Դրա հիմքում ընկած են ֆիզիկական և մտավոր բնականոն գործընթացները, առողջ երևակայությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատումը, որոնք բնորոշում են «Ես»-ը, հիմք ծառայում առողջ միջանձնային փոխհարաբերությունների համար և նպաստում հոգևոր զարգացմանն ու սոցիալական հարմարմանը: Այդ գործընթացները միավորվում են անհատական զարգացման բարձրագույն կետում:

Յուրաքանչյուր մանկավարժ ունի ֆիզիոլոգիական բնականոն պահանջմունքներ: Դրանք ներառում են՝ առողջ սնունդը, սեռական մերձեցումը, քունը, ֆիզիկական չափավոր ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև ճանաչողական գործունեությունը, ինքնահաստատման ներքին պահանջը, սոցիալական կապերը, արվեստի տարբեր բնագավառներին հաղորդակցվելու մղումները: Այս ամենը կարելի է միավորել հետևյալ ձևակերպմամբ. «Մանկավարժը, այլ մասնագետների նմանորոշյալ, կարիք ունի իր անձի և շրջակա միջավայրի հետ ընդհանուր ներդաշնակության»:

Առողջ մանկավարժը բնութագրվում է կյանքի փոփոխվող պայմանների նկատմամբ ճկուն հարմարվողականությամբ, հոգեկան հավասարակշռությամբ, սոցիալական լավատեսությամբ և անհրաժեշտ աշխատունակությամբ: Ինչպե՞ս կարելի է վերականգնել և պահպանել առողջությունը՝ մասնագիտության կիրառմամբ:

Ճանաչված մանկավարժ Ա.Ա. Դուրրովսկին մանկավարժներին առաջարկում է.

- ✚ Մի՛ ընկեք բարկության ճիրանները:
- ✚ Մեծ պահանջներ մի՛ դրեք շրջապատի հանդեպ:
- ✚ Երբեմն զիջե՛ք:
- ✚ Մի՛ փորձեք ամեն ինչում լինել կատարյալ:
- ✚ Շա՛տ շարժվեք:
- ✚ Հաճախակի ժպտացեք:
- ✚ Հիշեք, որ ձեր առողջությունը օրինակ է երեխաների համար:
- ✚ Եղև՛ք համբերատար, պահանջկոտ, բայց նաև ներողամիտ:
- ✚ Լսարա՛ն մտեք միշտ բարձր տրամադրությամբ:
- ✚ Շատ մի՛ կերեք. քող այն չանցնի օրական 1500 կալորիան:
- ✚ Սնվե՛ք ձեր տարիքի պահանջներին համապատասխան:
- ✚ Միրե՛ք և եղև՛ք քնքուշ, որպեսզի երիտասարդ մնաք:
- ✚ Միշտ ունեցե՛ք ձեր կարծիքը:
- ✚ Ֆիզիկապես լիցքավորվե՛ք:
- ✚ Քնե՛ք սառը սենյակում:
- ✚ Ժամանակ առ ժամանակ ապրե՛ք ինքներդ Ձեզ համար:
- ✚ Մարզե՛ք գլխուղեղը:
- ✚ Բարկությունը մի՛ պահեք Ձեր մեջ:
- ✚ Կարողացե՛ք հոգսերից հեռու մնալ:

Թո՛ւ՛յլ տվեք այս ցուցակին ավելացնել նաև արևելյան փիլիսոփայության ճշմարտություններից երկուսը և կանգ առնել հատկապես դրանցից վերջինի վրա.

- ✚ Սովորե՛ք ճիշտ շնչել:
- ✚ Ծանոթացե՛ք մեդիտացիոն արվեստին:

Յուրաքանչյուր մարդ բնության մի մասնիկն է՝ անկախ իր մասնագիտությունից և հետաքրքրություններից: Նա անկրկնելի է և կատարյալ, տարբերվում է մյուս կենդանի էակներից իր գիտակցությամբ և մտածողությամբ, ենթարկվում է բնության արևալուսնա-երկրային պարբերականությանը, ինչպես նաև մակրոտիեզերքի օրենքներին:

Մտածողությունն օրգանական աշխարհի բարեշրջումային(էվոլյուցիոն) զարգացման ամենավերին աստիճանն է: Յավոք, մարդը ոչ միշտ է կարողանում ճիշտ օգտագործել իր մտածողությունն ու գիտակցությունը՝ հոգուտ սեփական առողջության: Չենք սխալվի, եթե ասենք, որ մարդը հաճախ դառնում է իր մտքերի և զգացմունքների ծառան. կառավարվում է նրանց կողմից՝ կորցնելով սեփական վարքի վրա ուժն ու ազդեցությունը:

Միքելի՝ մանկավարժներ, փորձենք մտաբերել, թե երբ ենք վերջին անգամ դանդաղ կերել և մեր միտքը, համային ու հոտառական զգայարանները կենտրոնացրել միայն սննդի արտաքին տեսքի, գույնի, որակի, հոտի ու համի վրա: Երբ ամեն անգամ որևէ բան ենք ճաշակում, եկեք փորձենք նորովի զգալ և ընկալել այն: Հնդիկ բժշկապետները խորհուրդ են տալիս ուշադրությունը կենտրոնացնել ուտեստի համի, բուրմունքի, տեսքի, գույների և այլ հատկանիշների վրա, որոնք յուրօրինակ զգացողություններ են առաջացնում: Նրանք խորհուրդ են տալիս լեզվի բոլոր համային ընկալիչներով, քթի բոլոր հոտառական ընկալիչներով ամբողջական տեղեկատվություն ստանալ սննդատեսակից մինչև դրա համատեսումը: Այդ նույն ուտեստը նորովի կընկալվի: Առաջացած զգացմունքները կլինեն հեքիաթային, նույնքան վառ, գեղեցիկ ու լուսավոր:

Ոչինչ չի կարելի անել մեխանիկորեն և սովորույթի ուժով: Չի կարելի մտնել լսարան, եթե դասի ընթացքում պետք է մտքով լինեք մեկ այլ տեղում և լուծեք Ձեր ամենօրյա հոգսերն ու խնդիրները: Գրա հետևանքով Ձեր օրգանիզմում ամիս առ ամիս կկուտակվեն տարբեր թունավոր նյութեր, և ձեր օրգանիզմը կստանա բացասական, հիվանդագին տատանումներ:

Առօրյա զբաղվածությունը հաճախ է մեզ ներքաշում մեղիտացիոն գործողության մեջ և դուրս բերում դրանից: Պարզապես պետք է իմանալ, որ *աշխատելու ընթացքում պետք է միայն աշխատել, ուտելու ժամանակ միայն ուտել, խաղալու ժամանակ՝ խաղալ...*

Հնդիկ փիլիսոփաները, որոնք ծանոթ էին մեղիտացիոն արվեստին, ասում էին, որ մեղիտացիայի ժամանակ սկզբում մենք ամբողջությամբ թուլանում ենք, հետո կենտրոնանում կոնկրետ օբյեկտի վրա: Օրինակ՝ մանկավարժը կենտրոնանում է կատարվող աշխատանքի, լսարանում ներկա բոլոր երեխաների վրա անհատապես: Գա հնարավորություն է տալիս հոգևոր և ֆիզիկական սերտ շփման մեջ մտնել յուրաքանչյուր սովորողի հետ: Նա պարբերաբար հանդիպում է տարբեր բնավորությունների երեխաների հետ: Մի մասին ճանաչում է հենց առաջին իսկ շփումից, իսկ մյուսներին՝ ոչ: Այն սաներին, որոնց հնարավոր է լինում ճանաչել միանգամից, մոտենում ենք դրական կանխամիտումով, իսկ մյուսների հետ շփման ընդհանուր եզր ստեղծվում է ավելի ուշ: Յուրաքանչյուր երեխայի պետք է դիմավորել «բաց սրտով»: Երեխային պետք է հասանելի լինեն մանկավարժի կողմից արձակած դրական տեղեկատվային, մոտիվացիոն տատանումները, դրական լիցքերը, որոնք ժամանակի ընթացքում կօգնեն վերափոխելու սովորողի դիրքորոշումը տվյալ մանկավարժի, առարկայի, դասի, երևույթի և, ի վերջո, կյանքի հանդեպ: Հակառակ դեպքում մեխանիկորեն փակվում են մանկավարժի էներգետիկ դռները, և սովորողների ու մանկավարժի միջև չի գոյանում շփման ընդհանուր եզր:

Կրկին անդրադառնանք մանկավարժի առողջության հիմնախնդրին:

Միքայել Գրադին, որը շուրջ 25 տարի դասավանդում է մանկավարժներին, առաջարկում է ամեն առավոտ լուսադեմին կատարել «կրակի շնչառությունը» վարժություն-



նր: Վերջինիս հիմքում ընկած են իրար հաջորդող ներշնչումներ և արտաշնչումներ, որոնց ընթացքում որովայնի և ստոծանու մկաններն ակտիվորեն կծկվում են և օդը մղում դեպի շնչառական ուղիներ: Մարմնում առաջանում է էներգիա, արյունն ակտիվորեն շրջանառվում է որովայնի օրգաններով՝ խթանում լյարդի, փայծաղի և ենթաստամոքսային գեղձի աշխատանքը, և բարձրանում է մարտոդրության արդյունավետությունը: Յուրտ ձմռանն այս վարժությունը վաղ առավոտյան անոթի վիճակում կատարելու դեպքում մարքվում են քթի խոռոչները, ծոցերը և բոքերը: Փորձենք առավել մանրամասն նկարագրել վարժությունը:

Վարժություն՝ «Կրակի շնչառությունը»: Նստեք հարմարավետ, մեջքը ուղիղ: Զբաղեցրե՛ք մի քանի անգամ խոր, հանգիստ շնչեք: Դրանից հետո որովայնի մկանները ուժեղ և արագ կծկելով՝ արտաշնչե՛ք: Այնուհետև նույն ուժով կատարեք ստոծանին ընդգրկող արագ ներշունչ՝ միաժամանակ թուլացնելով որովայնի մկանները: Այս վարժության մեջ առանցքայինը որովայնի և ստոծանու մկանների կծկումների համակցումն է, որպեսզի օդը արագ մղվի բոքեր և այնտեղից դուրս գա: Երբ արտաշնչման վերջում որովայնային մկանները թուլանում են, ստոծանին ակտիվորեն կծկվում է, և սկսում է ներշունչը: Ներշնչման գազաթնակետին անմիջապես կծկվում են որովայնային մկանները: Այս վարժությունը ժամանակ է պահանջում այդ շարժումները համակցելու համար: Եթե վարժության ընթացքում դուք զգում եք կողերի շրջանում սուր ցավ կամ անհանգստություն, ապա անմիջապես անցեք սովորական ստոծանիական շնչառության: Խորհուրդ չի տրվում այս վարժությունը կատարել այն մանկավարժներին, որոնք ունեն ստամոքսի խոց, արյան բարձր ճնշում, սրտի քրոնիկ հիվանդություն, գտնվում են դաշտանային ցիկլի կամ հղիության շրջանում:

Հնագույն ժամանակներում չինական առողջարարական վարժությունները կոչվել են *դաո-յուն*: Դրանք նույնքան հին են, որքան չինական մշակույթը: *Դաո-յուն*-ի մեջ կան համակարգեր, որոնց միավորում են հետևյալ ընդհանուր նպատակները՝ մկանների զարգացում, ջրերի ամրացում և ձգում, հողերի աշխատանքի լավացում, ներքին օրգանների գործունեության բարելավում: *Դաո-յուն*-ին բնորոշ առանձնահատկություններից է այն, որ ամբողջ աշխատանքն ուղղվում է տարբեր օրգան-համակարգերի փոխազդեցության հավասարակշռմանը, և հատուկ շեշտադրվում է ֆիզիկական մարմնի ու հոգևոր մարմնի՝ գիտակցության համակցումը:

Բոլոր մանկավարժներն առօրյա կյանքում ենթարկվում են թե՛ ֆիզիկական և թե՛ մտավոր ծանրաբեռնվածության, ինչն էլ օրգանիզմի վրա թողնում է անբարենպաստ հետևանքներ: Այս վարժությունները հեշտությամբ հանում են այդ հոգնածությունը, ինչպես նաև հաղորդում են հարմարավետության զգացողություն: Չինական վարժությունները ձեռք են բերել հսկայական ճանաչում՝ Արևելյան Ասիայից մինչև Արևմուտք:

Հարկ է նշել, որ վարժությունների կատարման ժամանակ աշխատում են ոչ թե առանձին մկանախմբեր, այլ ամբողջ օրգանիզմը: Շնչառությունը և շարժումները կատարվելու են ռիթմիկ ու դանդաղ: Պետք է մարզվել մարմնի շարժումները չսահմանափակող հարմարավետ հագուստով:

Չինացի ավանդական բժիշկները խորհուրդ են տալիս նախքան վարժությունների կատարումը ցնցուղ կամ լոզանք ընդունել, պարապել բացօթյա տարածքներում, որտեղ օդը մաքուր է և քարմ: Նրանք խորհուրդ են տալիս չլարվել: Գրսում պարապելու ժամանակ արևը պետք է տաքացնի մեջքի կողմը: Պետք է շնչել խոր ու համաչափ, շնչառությունը լինելու է անխելի: Միշտ հիշեք (հատկապես արտաշնչելու ժամանակ) դան-տյան կետի մասին, որը գտնվում է պորտից մեկ ափ ցած՝ որովայնի խորքում: Պարապմունքները կարելի է սկսել լավ ուտելուց մեկ ժամ հետո կամ քեթև ուտելուց 30 րոպե հետո: Նրանք առաջարկում են պարապելու ընթացքում կենտրոնանալ մարմնի զգացողությունների վրա. խիստ կարևոր է հարմարավետության զգացողությունը: Շարժումները պետք է կատարվեն փափուկ և սահուն: Վարժությունը կատարելուց հետո խորհուրդ է տրվում մի քանի րոպե հանգիստ կանգնել՝ կենտրոնացնելով ուշադրությունը դան-տյան կետի վրա, այնուհետև շփել ձեռքերը, գլուխը, որովայնի ստորին հատվածը, մարմնի այլ մասերը: Այս ամենից հետո միայն վարժությունները կարելի է համարել ավարտված:



Վարժություններ նստած դիրքում

Ներկայացնենք այն 2 հիմնական վարժությունները, որոնք առաջարկում են չինացի ավանդական բժիշկներ:

Առաջին վարժությունը ներքին օրգանների համար չինական բոլոր վարժությունների հիմքն է: Այն կօգնի Չեզ հանգստանալ ոչ միայն ֆիզիկապես, այլև վանել մտավոր լարվածությունը: Որոշ մարդիկ օգտագործում են այս դիրքը մեղիտացիայի ժամանակ:

Երկրորդ վարժությունը կօգնի ուղղել ողնաշարը, ամրացնել մարսողական համակարգը:

Վարժություն 1: Նստեք նստարանի վրա այնպես (հենման մակերեսի լայնությունը 10 սմ է), որ դրա եզրը լինի ձեզ կրկնների հետ միևնույն մակարդակի վրա: Ձեռքերը դրեք ձեզ կրկնների վրա, ներքաններն ամուր հենեք գետնին, իսկ ոտքերը բացեք ուսերի լայնությամբ: Թուլացրե՛ք ուսերը, արմունկները պետք է լինեն քիչ ծավալած՝ բնական դիրքում: Ներս քաշեք կզակը և թուլացրեք կուրծքը: Բքի ծայրը պետք է լինի պորտի հետ միևնույն մակարդակի վրա: Նայե՛ք առաջ կամ փակեք աչքերը: Փակե՛ք բերանը, մի փոքր սեղմե՛ք ատամները: Լեզվի ծայրը հպվում է քիմքին: Խո՛ր շնչեք, բայց շնչառությունը մի՛ պահեք: Որքան հնարավոր է՝ շնչե՛ք դանդաղ և այնպես, որ անհարմարության զգացում չառաջանա: Այսպիսի շնչառության ժամանակ Գ-ուր պետք է թուլացնեք Չեզ և հանգստանաք: Աշխատե՛ք մաքրել ուղեղը ներշնչելու ժամանակ և թուլացնել մկանները արտաշնչի ժամանակ: Կատարե՛ք վարժությունը 5–15 րոպե:

Վարժություն 2՝ «Մարմնի ճոճում էներգիայի օվկիանոսի ալիքներում»: Ընդունե՛ք ելման դրություն (նստած դիրք): Ոտքերը դրեք ուսերի լայնության մեկուկես չափով:



Թերվե՛ք աջ, հետո առաջ, այնուհետև հետ և նորից առաջ: Առաջ քերվելիս արտաշնչե՛ք՝ սալա ներշնչե՛ք, երբ վերադառնում եք ելման դրությո՛ւն: Վարժությունն անընդմեջ կատարեք 36 անգամ: Ելման դրությունում կատարեք 2 – 3 խոր շնչառական շարժումներ, այնուհետև իրանը շրջեք հակառակ ուղղությամբ, 36 անգամ: Պատկերացրե՛ք, որ Ձեր մարմինը ճոճվում է էներգիայի օվկիանոսի ալիքներում: Վերջացնելով վարժությունը՝ 15–20 րոպեների ընթացքում 2–6 անգամ խոր շնչեք:

Այս վարժությունն օգնում է հավասարակշռել ներքին օրգանների աշխատանքը: Այն հատկապես օգտակար է անմարսությամբ, փորկապությամբ, գոտկացավերով, անքնությանը տառապող անձանց համար:

Գոյություն ունեն մի շարք հիվանդություններ, որոնք ռիսկային խումբ են համարվում մանկավարժների համար: Դրանց թվին են պատկանում.

- ✚ ֆարինգիտը, այլ խտսքով՝ կոկորդի բորբոքումը կամ գրգռվածությունը
- ✚ նկրոզները
- ✚ անքնությունը
- ✚ գերհոգնածությունը
- ✚ կարդիոնկրոզները և առիթմիաները
- ✚ միգրենը:

Ամենահաճախադեպը կոկորդի գրգռվածությունը և նկրոզներն են: Եթե ձայնալարերի մշտական լարվածությանը գումարվում է նաև բակտերիալ կամ վիրուսային որևէ ախտաբանություն, սալա կոկորդի գրգռվածությանը հաջորդում է կոկորդի և նշիկների բորբոքումը: Նման պարագայում զարգանում են ֆարինգիտ, լարինգիտ կամ տոնզիլիտ: Թերևս դժվար է խուսափել նման ախտաբանություններից, սակայն կա միջոցառումների համակարգ, որն օգնում է թեթևացնել, երբեմն նաև լիովին ձերբազատվել դրանցից:

Ժամանակակից նատուրոպատների առաջարկած դեղատոմսերից մի քանիսը նպատակ ունեն կանխելու և բուժելու ֆարինգիտը.

1. Ամեն առավոտ և երեկոյան կատարեք պարանոցի շրջանի վարժություններ. պարանոցի ծալում առաջ և հետ, պարանոցի ծալում աջ և ձախ, պարանոցի շրջում ձախ և աջ, պարանոցի պտույտներ ժամացույցի պաքի ուղղությամբ և հակառակը: Ընդ որում, բոլոր ծալումները կատարվում են ներշնչման, իսկ գլխի պարզումները՝ արտաշնչման ժամանակ: Օրինակ՝ ներշնչման ժամանակ գլուխը խոնարհում ենք դեպի առաջ, իսկ արտաշնչման ժամանակ՝ ուղղում: Այնուհետև ներշնչման ժամանակ գլուխը խոնարհում ենք դեպի ետ, իսկ արտաշնչման ժամանակ՝ ուղղում: Յուրաքանչյուր վարժություն կատարվում է 5-10 անգամ:

2. Ամեն առավոտ արևածագին խորհորդ է տրվում կանգնել մաքուր օդում, նայելով արեգակին՝ փակել աջ քթանցքը և ձախով 3 անգամ խոր ներշնչել ու արտաշնչել: Հետո նույնը կատարել մյուս քթանցքով:

3. Երեկոյան քնելուց առաջ ցանկալի է խմել հետևյալ խառնուրդը. 1 ք. գդալ մեղր+1 ք. գդալ զեյթունի ձեթ+1 հատ քամած կիտրոնի հյութ: Այս խառնուրդն օգնում է

նաև անքնության, նկրողների, ֆորիաների, հազի, առիթմիաների և ավիտամինոզի ժամանակ:

4. Առավոտյան և երեկոյան կատարեք յոդինոլի լուծույթով ողողումներ: Կես բաժակ յոդինոլի լուծույթին ավելացնել նույնքան եռացրած, սառեցրած ջուր:

5. Հաճախակի՝ խմեք մրգային կոմպոտներ՝ առանց շաքարավազի և ոչ շատ տաք վիճակում, քանի որ տաք ըմպելիքները գրգռում են կոկորդի լորձաթաղանթը:

6. Հետևեք Ձեր խոսքին և դրա հաճախականությանը, ավելի՛ շատ եղեք ուկնդրի դերում. ուսուցակենտրոն մոտեցումը պետք է իր տեղը զիջի աշակերտակենտրոն մոտեցմանը:

Առաջարկում ենք նաև դեղատոմսեր նկրողների դեմ.

- ✚ Հաճախակի՝ զրոսներ մաքուր օդում:
- ✚ Շա՛տ շարժվեք:
- ✚ Շա՛տ ժայտացեք հայելու մեջ ինքնելող ձեզ:
- ✚ Ֆիզիկապես եղե՛ք ակտիվ:
- ✚ Բնե՛ք սառը սենյակում:
- ✚ Ժամանակ առ ժամանակ այցելե՛ք քանգարաններ:
- ✚ Մարզե՛ք գլխուղեղը ռերուսներով և գլուխկոտրուկներով:
- ✚ Բարկությունը մի՛ պահեք Ձեր մեջ:
- ✚ Հոգսերից կարողացե՛ք հեռանալ՝ տրվելով սիրած գրադմունքին:

Մարիամ Օհանյան

*«Անանիա Շիրակացի» ճեմարանի կենսաբանության ամբիոնի ուսուցիչ,
բժիշկ ռեֆլեքսոթերապևտ*

Օգտագործված գրականություն

1. Биология в школе (научно-методический журнал), 4, 2008, ООО Издательство “Школа-Пресс”.
2. Геннадий Малахов “Биоритмы здорового образа жизни” Санкт-Петербург 1999.
3. Гариет Байнфилд, Ефрем Корнголд “Между небом и землей”, справочник по китайской медицине, Москва, Крон-Пресс, 1997.
4. Кацудзо Ниши “Очищение души: Уроки Медитации”, Санкт-Петербург 2002.
5. “The empty vessel” A Journal of daoist Philosophy and Practice, 2007.
6. “Light of consciousness” Journal of spiritual awakening, Winter 2006.
7. “Yoga + Joyful Living” Journal of spiritual awakening, January-february 2007.



ԱՇՆԱՆՍ - ԲԵՄԵԿԵՆԸՑՈՒՄ

Թոշակառու մանկավարժ Արուս Ոսկանյանը երկար տարիներ աշխատել է Երևանի թիվ 68 դպրոցում: Նա «Նախաշավիղին» է տրամադրել դասական և ժամանակակից հայ հեղինակների ստեղծագործություններից քաղված ուշագրավ և արժեքավոր հատվածներ: Հավատացած ենք, որ մեր դասավարները դրանք խելամիտ ու ստեղծագործական մտտեցմամբ կօգտագործեն արտադասարանական հանդեսների սցենարներ պատրաստելիս:

Ստորև ներկայացնում ենք աշնանային հանդես- բեմականացման համար Արուս Ոսկանյանի ներկայացրած ծրագիրը:

1. Այսօր ուրախ ենք այնքա՛ն, հագնվել ենք տոնական,
Ի՛նչ էլ պայծառ օր է բացվել, որքան մա՛րդ է հավաքվել:
Անվերջ գալիս են ու գալիս մեր հյուրերը խանդավառ:
Գեղին խնդրությունն է քևածում ու ցնծում շուրջբոլոր:
Սրտատրոփ մենք սպասում ենք, հյուր է գալու աշունը,
Չմոլորվի՞ հանկարծ ճամփին, չուշանա՞ հանկարծ...
Բայց ո՛չ, գալիս է, ահա երևաց, դիմավորե՛նք նրան:

Հայտնվում է ոսկեհեր աշունը և դիմում ամենքին.

-Եկա՛, եկա՛, ի՛մ բալիկներ, ծնողներ ու ուսուցիչներ,
Ձեր հրավերքը հենց ստացա, իսկույն ճամփա ես ընկա:
Երկար ճանապարհ եմ անցել, մինչև որ ձեզ եմ հասել,
Գե երգե՛ք, պարե՛ք, ասմունքե՛ք, իսկ ես նստեմ, վայելեմ:

2. Հագար գույնով ես դու եկել, անուշ բույրերով ես եկել,
Վառ արևից շողեր առել ու նրանից գույներ խնդրել,
Արևն արած ներկապնակ, գուգել ես մեր երկիրը,
Վրձնել նախշերով ու պարուրել հագար բույրով:

3. Գե ի՞նչ, սկսենք տոնահանդեսը, այնքան բան կա ասելու՛...

Ինչպես բոլորս գիտենք, Գիտելիքի, գրի ու դպրության տոնը
Աշնան առաջին օրն է նշվում, որը կրկնակի տոն է դառնում
Առաջին անգամ դպրոց հաճախող փոքրիկների համար,
Որոնց մոր նման ժպտում է ուրախ ուսուցչուհին առաջին՝
Ակնադրյուրը լավի, բարու, սկզբնադրյուրը գիտելիքների.

Իմացության հրճվանքն առաջին նրանց պիտի նա՛ պարզելի:

4. Հիշարժան օրն առաջին երկա՛ր տարիներ վառ կմնա հիշողության մեջ,
Արևով օծված աշուկներով իրենց խատուտիկ նրանք հեռո՛ւն կտեսնեն,

- Ապա ամրացած իրենց ձեռքերով Եռագույն դրոշը վեհ կծածանեն,
 Խանդավառված մեր հաղթական երգերով՝ դեպի անհունը կզնան:
5. Երկար սպասված անկախության հաղթանակն էլ ենք նշում աշնանը,
 Անկախություն, որ թանկ է ու սուրբ մեր հաղորդության նշխարի նման:
Ներս րերել դրոշը, Մեսրոպ Մաշտոցի մեծադիր դիմանկարը...

Երգ *Մեր հայրենիք ազատ, անկախ,
 Որ ապրել է դարերդար,
 Յուր որդիքը արդ կանչում
 Ազատ, անկախ Հայաստան:
 Ամենայն տեղ մահը մի է,
 Մարդ մի անզամ պիտ մեռնի,
 Բայց երանի, որ յուր ազգի
 Ազատության կզոհվի:*

6. Գիտե՞ք, թե ում ենք մենք պարտական այս օրհներգի, մեր գոյի ու արարման,
 Այսօրվա ազատ մեր կյանքի համար. առաջին հերթին՝ մեծն Մաշտոցին՝
 Մեր հայրենի առաջին ուսուցչին՝ Ամենայն հայոց ուսուցչապետին:
 Զարմանալիորեն աշնանն ենք նշում և Ուսուցչի՝ օրը, հիշում Մաշտոցին:
7. Մեր դպրության կանթերը վառելու համար նրան շատ ենք պարտական,
 Երախտապարտ ենք թե՛ Մաշտոցին, թե՛ հայ նվիրյալ ուսուցիչներին
 Ու չենք մոռանա, ինչ էլ լինի, պատգամը մեր մեծ ուսուցչապետի.
 Թող մանկանան ձեր շուրթերին, տառերը մեր առնեն թևեր,
 Տանեն գալիք սերունդներին հավերժական կրակը մեր:

Երգ *Հայաստան աշխարհ, դու մեր կարոտն ես՝ նոր կյանքով անմար,
 Ըն ճամփեն հնում արևոտ, քարոտ էր, ծաղկում է հիմա:
 Փառքդ թնդում է, երգդ կանչում է,
 Հողդ դարձել է ծով, զանձ,
 Միտքդ պայծառ է, սիրտդ կայտառ է,
 Ազգ իմ փառապանծ:
 Ուր լինենք հավերժ մեր լույս փարոսը տունն է հայրենի,
 Մաշտոցի հզոր լեզուն վառ հույսն է ամեն մի հայի:
 Փառքդ թնդում է, երգդ կանչում է...*

8. Արյան թանկ գնով մեր ձեռք րերած անկախությունն ու ոսկեղենիկը
 Մենք պահեցինք, հարատևեցինք, մնում է՝ միայն մեր Մասիս սարի
 Խոր վերքերն էլ մենք բուժենք. մեր Հայաստանը ծովից ծով դարձնենք...
9. Ալեհեր Մասիսի նման մեր ժողովրդի անլուր տառապանքների
 Ու հերոսական մարտումների ականատես Էրերունի-Երեւանի
 Ծննդյան տարելիցը ևս աշնանն ենք նշում հաղթանակած հայերս:

10. Երևանն ասես շքանշան լինի հիմնավորոց մեր ժողովրդի ջահել կրծքին,
Իսկ շքանշանն այդ հայարտ է կրում ու պարտավորվում հայոց մեր ազգը:
11. Իմ Երևանի ծննդյան տոնին, աշուն, դու գուլալ գրնգոց ես դառնում,
Տերևաթափիդ քեթև պարով կարծես անձրև ես թափում վերից,
Փողփողում է քաղաքը իմ աշնանաշունչ, և Արագածն արևագոծ,
Արարատը վեհամռունն ասես հառնող թմբուկներից ավելի են հզորանում:

Երգ *Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երագանք,
Մեր քարե կարոտ, մեր քարե նագանք:
Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր են անցել, բայց մնացել ես պատանի:
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով
Մեծանաս դարով, Երևան:*

Աշունը մոտենում է երեխաներին ու իր զարմանքն է հայտնում.

12. -Գիտե՞ք, անուշի՞կ իմ բալիկներ, ես այդ մասին երբևէ չէի էլ մտածել.
Դուք հպարտանալու առիթ տվիք ինձ, բայց ախր ինքս չեմ արել ոչինչ...
13. Մեզ դու երևի ճիշտ չհասկացար, սիրելի՛ աշուն, գուցե նեղացար.
Քո տոն օրերը նշեցինք առաջ, որ հետո անցնենք արժանի գովքիդ:
Դե հիմա նստիր ու մեզ ունկնդրիր, մենք ասելու շա՛տ բան ունենք քեզ:
14. Եկել ես՝ դեղին շորերդ հագած, քաղցր ու համեղ մրգեր շալակած,
Ձմայլում ես մեզ քո կախարդ վրձնով ու օդը լցնում անուշ բուրմունքով:
Սարեր, ձորեր, դեղնած դաշտեր, խիտ անտառներ, պուրակներ
Բարիքներով իրենց հասուն քաղվորների են սպասում:
15. Է՛լ մոշ ու մոռ, անուշ խնձոր, է՛լ կաթուկ տանձ, է՛լ կարմիր հոն,
Կաղին, ընկույզ, սալոր ու դեղձ. օ՛, ի՛նչ մրգեր, ի՛նչ ծաղիկներ,
Եվ ինչ անո՛ւշ են նրանք բուրում և ինչպե՛ս են մեզ հմայում:
Օջախի պես հյուրընկալ՝ այդ դու ես, աշուն, մեզ հրամցնում:

Երգ *Ձա՛ն, ջա՛ն, ջա՛ն, աշուն է,
Տե՛ս, տե՛ս, տե՛ս, նախշուն է,
Անուշ մրգեր ուտելու
Նա մեզ այգի է կանչում:
Ձա՛ն, ջա՛ն, ջա՛ն, աշուն է,
Տե՛ս, տե՛ս, տե՛ս, նախշուն է,
Աղջիկ, տղա շարքերով
Նա մեզ դպրոց է կանչում:*

16. Տերևները գույնզգույն պար են բռնել առաջ, հետ,

Խշխշում են ու երգում, մեր սրտերը ջերմացնում:

Մայր ծառի գիրկը թողած՝ կախարդական ձեռքով անտես
Վառվառն գորգ են դառնում տերևները խալտարդետ:

17. Աշուն, դու էլ տատիս նման գորգն ես հյուսում քո նախշուն

Եվ գույներով քո աննման, առինքնող մեր սրտի հետ ես խոսում:

18. Այնպես քայլենք գորգի վրա, որ ցավ չտանք տերևներին,

Թե չէ քնքուշ տատիս նման աշուն տատն էլ մեզ չի ների:

19. Գետակը գիժ ու պղտոր շտապում է դեպի ձոր,

Քչքչալով ձորակում՝ փրփրում է ու երգում.

- Գալղ բարի, ջա՛ն աշուն, ի՛նչ սիրուն ես ու նախշուն:

20. Ի՛նչ շշուկներ, ի՛նչ երգեր, ի՛նչ բույրեր կան շուրջբոլոր:

Դեղին կարոտ է աշխարհին իջել, դեղին է քամին, դեղին է մայրը,

Երկնքից դեղին անձրև՝ է մաղում, օրը լցվում է դեղին մշուշով,

Դեղին խնդրությունն է մեզ պարուրել, մեր հոգիները ջերմացրել:

21. Աշունը հեքիաթ է ու երգ, աշունը խաղիկ է ու տաղիկ,

Աշունը կարմիր է ու կրակ, աշունը ծիծաղ է ու բերք:

Երգ *Սեղանն է առատ, դիմացն Արարատ,*

Հնչում են երգեր ուրախ ու զվարթ:

Փառք տանք մայր հողին, արևի շողին,

Գինի սյարգևող հայոց խաղողին:

Գովենք դարեդար աշխատանքն արդար,

Հայոց աշխարհի արևը պայծառ:

22. Վառ արևի շողերով ողջունում է մեզ քնքուշ,

Հագնվել է նա նախշուն, անունը՝ Ոսկե աշուն:

23. Կանչում է նա ամենքին, ոսկի հայացքով պարուրում,

Խաղաղ ժպիտն իր ընծայում է մեզ, անուշ բույրերով շոյում,

Ամեն մեկիս ականջին մե՛ղմ դմբող խոսքեր է շշնջում:

24. Ոսկի է մաղում ու գոհար շաղում

Այրվող ու պապակ դեղին դաշտերին,

Իր հյուրընկալ դռներն է բացում

Ամենքի առաջ ու կանչում իր մոտ.

25. - Բարեկամներ իմ սիրասուն,

Եկեք կաղին հավաքեք,

Սունկ հավաքեք ու հաղարջ:

Նապաստակներ, հյուր եկեք,

Եկե՛ք, ոզնի՛, գայլ ու արջ:

Լցրե՛ք բույնն ու որջը ձեր,

Մոշահավե՛ր, ճնճղուկներ,

Կարմրել են նուռ ու հոն,

Հասել է բերքն անհամար,

Եկե՛ք, կերե՛ք, վայելե՛ք,

Ում սիրտն ինչքան որ ուզի:

Կզարքիսներ, սկյուռներ,
 Բերքն առատ է, օրը՝ ջերմ,
 Որ երբ ձմեռը շուտով իջնի,
 Դուք խեղճ ու քաղցած չմնա՛ք:

27. Շուտով սարից փչեց քամին, ձորում առուն է վշշում,
 Ծառից իջնում, քամուց փախչում, տերևներն են խշխշում,
 Տարածվում են չորսրոլոր, փարվում մարդկանց ոտքերին,
 Մորից պոկված ու խեղճացած՝ տխուր երգեր են երգում:

Երգ *Դեղնած դաշտերին իջել է աշուն,
 Անտառը կրկին ներկել է նախշում:
 Պաղ-պաղ մեզի հետ փչում է քամին,
 Քշում է, տանում տերևը դեղին:
 Տխուր հանդեից ամենքը տրտում
 Քաշվում են կամաց իրենց որջ ու տուն:*

28. Տերևները՝ քշված քամուց, տեսնես՝ ի՞նչ են փափսում,
 Բայց չեն լսում նրանք մեկմեկու, դժգոհում են, փնթփնթում,
 Միմյանց վրա բարկանում են ու աղերսում են քամուն,
 Բայց քամին խենթ շառաչում, ծառից նրանց պոկում է,
 Պարելով վար են իջնում, փարվում հողին՝ սառն ու քաց:

29. Նախշում հագած սիրուն ծառեր,
 Դուք մի՛ լսեք խենթ քամուն,
 Շուտով կզա՛ ձյուն-ձմեռը,
 Դուք ինչո՞ւ եք մերկանում:

30. Բայց աշունը շռայլ չէ լոկ,
 Նա խելոք է, իմաստուն,
 Տեսե՛ք, թե ինչ խորհուրդ տվեց
 Նա ծառերին մերկացող.

31. -Չմռանն օգուտ չեն բերելու
 Ձեր շորերը նախշագարդ,
 Բեռ կդառնան ձեզ համար,
 Փշրվելով կրնկնեն ցած:

32. Համոզում է սակայն քամին
 Ոսկի, դեղին, վառ ծիրանի,
 Խայտաբղետ գույնով պատված
 Տերևների, որ հետևեն,
 Գնան իր հետ հեշտ ու անթև
 Անհետ ճամփով անհայտ տեղեր.
 Չեն իմանա այնուհետև՝
 Էլ ինչ է դող, ինչ է ձմեռ:

Երգ *Գետակի վրա թեքվել է ուռին
 Ու նայում է նա վազող ջրերին:
 Երազ աշխարհում ամեն քան հավետ*

*Գալիս է, գնում ու ցնդում անհետ:
Եվ գրուխը կախ նա լաց է լինում,
Ջրերը անուշ գալիս են, գնում:*

Մերկացած ծառերի տեսարան...

33. Ծառերն էլ կանգնել են մերկ,
Ծառերը դողում են խեղճ,
Ծառերը տխուր են, աներգ
Ու դժգոհում են անվերջ:

Ծառերից մեկը դիմում է մյուսներին.

34. –Պոկեց անսիրտ քամին, մեր շորերը տարավ,
Տվեց սար ու ձորերին, ցրեց հյուսիս ու հարավ:
Հիմա մենք ո՞նց պիտի առանց հագուստի մնանք,
Այսր շա՛տ կմրսենք, օրերը կցրտեն, կչորանանք:

Հայտնվում է աշնան արևը և հուսադրում ծառերին.

-Ձյուն կլինի, բուք կլինի, բայց ոչինչ,
Թիկնոց կհագնեք դուք ճերմակ
Ու ձմռանը կմնաք նրա տակ:
Իսկ երբ գարունը նորից գա,
Դալար ճյուղերն էլի կծաղկեն,
Թռչուններն ուրախ էլի հյուր կգան
Ու անուշ կերզեն՝ ձեն ձենի տված:

35. Իմաստուն է աշունը,

Չգալ չի՛ կարող ձմեռը:
Գարունն էլի կգա ու կանցնի,
Ամռանը նորից կհաջորդի աշուն,
Ողջ բնությունն էլի կձուլվի ոսկով...

Երգ

*Քնքուշ լուսնի շուշան փոշին մաղեց հեզ գետի վրա,
Մեղմիկ խշշաց ցորեն, ցողուն, սիրտս անդորր կծփա:
Ուռիները նազան-ծածան տերևները կշնչեն,
Ծիտ ու ծաղիկ ճուղքի վրա աշնան երագում կննջեն:
Լուռ կծորե աստղը շողեր, ու ծղրիղն աշնան կծորա,
Քամին կերզե գաղտնի երգեր, սիրտս հեռու կսլանա...*

36. Աշուն, քեզ ի՞նչ քնքշությամբ,

Ի՞նչ խոսքերով երզեմ ես
Քո մշուշը, քո ոսկին,
Տերևները հողմավար,
Դյութանքը քո մեղմ խոսքի,
Արցունքները քո գոհար:

37. Քո հեքիաթն ես պարզել, աշուն,

Մեր աշխարհի հեքիաթում
Եվ պատմում ես դու ամենքին
Խանդավառված ու իմաստուն.

Աշուն, քաղցր ու բաղձալի,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ:

38. -Ամենահամեղ մրգերն աշխարհին՝
Գեղձը, խաղողն ու ծիրանը,
Հայաստանն է պարզել:
Երբ ուզեցել են նրան ծնկի բերել
Թշնամիները՝ բյուրավոր ու նենգ,
Նախ այգիներն են նրա ոչնչացրել:
Բայց, ի հեճուկս ոսոխի,
Հայր ոչ միայն մատյան է գրել,
Աղոթել է ու խաչքարեր կերտել,
Այլ շարունակել է այգիներ տնկել
Ու ողջ աշխարհին զարմացնել:

39. Ու կարողացել է զարմացնել իրոք՝
Իր դեղձան քավշե յուրահատուկ դեղձով,
Անուշահամ ու բալասան իր ծիրանով,
Մեղրահամ տանձով, համեղ խնձորով,
Քաղցր ու թթվաշ արյունածոր նռով,
Ոսկեհատ ու շողշողուն իր խաղողով:

Երգ

*Իմ երկրի վրա շողում է սարը Արարատ,
Եվ խաղողը միշտ ժայտում է՝ քաղցր, ոսկեհատ,
Փայլփլում է մեր Սևանը, լույս տալիս անվերջ,
Ու ծաղկում է Երևանը՝ իմ քաղաքը պերճ:
Թնդա՛, զվարթ իմ երգ վարար,
Անցիր աշխարհն արար՝
Դու իմ սրտից քևեր առած:
Շողա՛, դալար իմ բուրաստան,
Ծաղկած իմ այգեստան,
Արևաշող իմ Հայաստան:*

40. Բարի բերք մաղթենք մեր հողին,

Մեր հողի ոսկի խաղողին,
Խաղողից գինի քամողին,
Մեր հողերն ազատ պահողին:

41. Լինենք արարող անվեհեր,
Ազնիվ, բարի, ճշմարտասեր,
Հայրենիքի վեհ նվիրյալներ,
Արժանի՝ ապրելու այս հողում:

42. Ոսկեհանդերձ եկար ու միզասքող,

Տխուրաչյա՛ աշուն, սիրած աշուն,
Եկար, զարմացրիր ու հիացրիր մեզ
Կախարդ երանգապնակիդ շքեղ,
Շլացուցիչ, զարմացնող խաղով:

43. Բերք ու բարիքի օրհնանքի տոնդ
Եկար ու բերիր մեզ խանդավառ:
Թուխպերի հետևից ծիկրակող
Արևիդ նվազ ճառագայթները քեև
Էլի փորձում են ջերմացնել մեզ,
Բայց մայրամուտիդ վերջին,
Թույլ վրձնահարվածները
Մեզ հիշեցնում են արդեն
Մոտավուտ ու շտապող
Ցուրտ ձմռան մասին:

44. Կռունկները կռկռան
Թևին տվին, վեր թռան,
Մեզ հրաժեշտ տվեցին,
Դեպի հարավ ձգվեցին:

45. Ուրեմն փռի՛ր քեզ ոսկի,
Պատմիր բոլորին հեքիաթդ վերջին:
Աշո՛ւն, քո մեղմ, անուշ սիրով ու երգով
Ննջեցրո՛ւ խաղաղ երկինք ու երկիր:

Երգ

*Գնաս բարո՛վ, նախշու՛ն աշուն,
Մենք շա՛ն, շա՛ն ենք քեզ սիրում,
Խոստանում ենք գալիք տարի
Հյուրընկալել քեզ կրկին:
Գնաս բարո՛վ, գնաս բարո՛վ
Հրաժեշտ ենք քեզ տալիս,
Բայց ուզում ենք, որ իմանաս՝
Շա՛ն կկարոտենք մենք քեզ:*

46. Դե՛, գնաս բարո՛վ, մեր սիրո՛ւն աշուն... (խումբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՄՓԵՔՈՎ

Դատելի ժամ՝ բաց դասի նկարագրություն

Երրորդ դասարանում անցկացված դատելի ժամի նպատակն էր՝ խորացնել մայրենիի ժամերին Հայաստանի վերաբերյալ հաղորդած մեր տեղեկությունները: Մովորողները ծանոթացան Հայաստանի հին ու նոր մայրաքաղաքներին, լեռներին, լճերին, մարզերին ու Արցախ աշխարհին:

Բաց դասն անցկացվել է դպրոցի դահլիճում: Դահլիճը կահավորված էր Հայաստանի և մարզերի քարտեզներով, եռագույն դրոշով ու զինանշանով, Արարատ լեռան մեծադիր նկարով:

Հնչում է ՀՀ հիմնը, որը կատարում է ամբողջ դահլիճը:

- Ո՞րն է Բարո, մեր հայրենիք,
- Էն, որ ունի բարձր երկինք,
- Էն, որ ունի ամպ ու արև

Յուր թագաբժան գլխու վերև:

- Էն, որ ունի աշխարհի թագ՝

Քանց թագավոր Մասիս ճերմակ,

Ճերմակ Մասիս, սիրտը մրմուռ,

Գլուխը վեր, դրախտի դուռ:

– Մեր հայրենիքը Հայաստանն է՝ Հայաստանի Հանրապետությունը, որի տարածքը զբաղեցնում է մոտ 30 հազար քառ.կմ մակերես:

– Հայաստանը թանգարան է՝ բաց երկնքի տակ: Այն հարուստ է պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող կոթողներով:

– Ավելի քան 10 լեռնաշղթա է բարձրանում Հայաստանի տարածքում՝ Վիրահայոց, Գուգարաց, Ջանգեզուրի, Բազումի, Փամբակի, Ծաղկունյաց և այլն:

– Հայկական բնության անկրկնելի գարդն են երկնասլաց Մասիսն ու քառագագաթ Արագածը, կապուտաչյա Սևանա լիճը:

– Հայաստանի հին անուններից մեկն է Նաիրին, որ նշանակում է «գետերի երկիր»: Իրավ, Հայաստանում շատ գետեր կան՝ Ախուրյանը, Որոտանը, Դեբեդը, Հրազդանը, Աղստեր, Արփան:

– Հայոց հայրենիքը հնում կրել է տարբեր անուններ՝ Նաիրի, Հայասա, Ուրարտու, Վանի թագավորություն, Հայք, Հայոց աշխարհ, Հայաստան:

Օտարները մեր հայրենիքը անվանում են Արմենիա:

– Հայաստանի մայրաքաղաքներ են եղել Վանը, Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը, Դվինը, Բագարանը, Շիրակավանը, Կարսը, Անին, Երևանը:

– Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներն են եռագույն դրոշը, զինանշանը և հիմնը:

– Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հավասար շերտերով: Եռագուն դրոշի յուրաքանչյուր գույն ունի իր խորհուրդը:

Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի՝ հանուն ազատության թափած արյունը: Կապույտը, ըստ բիրլիական ավանդության, Աստծո՝ հայոց կապույտ երկնակամարում կապած հաշտության գոտին է: Նարնջագույնը՝ աշխատանքի խորհրդանիշն է:

- Դու Ավարայրից մինչ Սարդարապատ
Ջորավիզ դարձար մեր լույս խոյանքին,
Փողփողա նորից, իմ սուրբ եռագույն,
Դու խորհրդանիշ կապույտ երկնքի,
Սիրո, սխրանքի և եղբայրության:

– ՀՀ զինանշանի հեղինակներն են Ալ. Թամանյանը և նկարիչ Հակոբ Առջոյանը:

– ՀՀ զինանշանի կենտրոնում, վահանի վրա պատկերված է Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և հին Հայաստանի չորս քաղաքությունների զինանշաններով:

– Հայաստանում են աճում ամենաքաղցրահամ խաղողը, ամենաընտիր դեղձը, համաշխարհային ջրհեղեղից փրկված ծիրանը, որը մեր հայրենիքի պարծանքն է:

– Արարատյան դաշտի եզրին՝ ձյունափառ Մասիսների դեմ-դիմաց, տարածվել է Հայաստանի մայրաքաղաք Երևանը: Այն աշխարհի հնագույն քաղաքներից է:

– Մեզնից 2790 տարի առաջ Արին Բերդ բարձունքի վրա Արգիշտի առաջինը հիմնադրեց Էրեբունի բերդաքաղաքը:

– Լուսառատ, արևային և վարդագույն քաղաք է Երևանը: Մեր հին մայրաքաղաքներ Արմավիրի, Արտաշատի, Դվինի, Անիի և մյուսների խորհուրդը կա բազմադարյան, բայց և նորօրյա Երևանի մեջ:

- Այնպես քնքուշ, այնպես զվարթ
Ժպտում ես դու, մեր Երևան,
Երկինքը պարզ, արևն առատ,
Քո ջուրն անուշ ու զլզլան:

– Երևան ... Հայ ժողովրդի հազարամյակների վկա է Երևանը, համայն հայության քաղաքամայրը: Երևան ասելիս անմիջապես հիշում ենք նրան շուք տվող, բայց հեռվում գերի մնացած սպիտակափառ Արարատը:

- Աշխարհ անցիր՝
Արարատի նման ճերմակ գագաթ չկա,

Ինչպես անհաս փառքի ճամփա՝

Ես իմ Մասիս սարն եմ սիրում:

– Քաղաքամայր Երևանի փողոցներն ու պողոտաները անվանվել են հայոց մեծերի անուններով: Օրինակ՝ Մաշտոցի պողոտա, Արշակունյաց, Վարդանանց, Տիգրան Մեծի փողոցներ և այլն:

– Հայարտության զգացում ենք ապրում, երբ կանգնում ենք Մատենադարանի առջև: Մատենադարանը հին, մագաղաթյա մատյանների պահոց է: Եվ ինչ մագաղաթներ...

– Մագաղաթներ՝ սուրբ, խնկարույր,

Բյուր դարերի փոշով օծված,

Դուք մեր նախնյաց ոգին եք հուր՝

Իմաստությամբ, խոհով լցված:

--Իսկ որքան գեղեցիկ է գիշերային Երևանը: Դա, իրոք, լույսերի ծով է, լույսերի հեղեղ, անմոռանալի շքեղ տեսարան:

--Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է 11 մարզերի՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի: Երևան քաղաքը նույնպես ունի մարզի կարգավիճակ:

–**Արագածոտնի մարզ:** Մարզկենտրոնը՝ Աշտարակ, քաղաքները՝ Ապարան, Թալին:

– Հայոց ազգին գիր պարգևած սուրբ Մաշտոցի խնկելի շիրիմն է իր գրկում պահում Արագածոտնի մարզի Օշական գյուղը:

– Արագածոտնի մարզը հայտնի է իր պատմաճարտարապետական կոթողներով՝ Սաղմոսավանք, Ամբերդի ամրոց:

– Այստեղ է գտնվում նաև Վիկտոր Համբարձումյանի աստղային թագավորությունը՝ Բյուրականի աստղադիտարանը:

–**Արարատի մարզ:** Մարզկենտրոնը՝ Արտաշատ, քաղաքները՝ Արարատ, Մասիս, Վեդի:

Այս մարզը գտնվում է Արարատյան դաշտում:

– Արարատի մարզում է գտնվում Խոր Վիրապի վանքը, ուր 13 տարի խոր փոսի մեջ Խոսրով թագավորի կողմից գերված է եղել Գրիգոր Լուսավորիչը:

– Այս մարզում են գտնվում նաև Արտաշատ և Դվին մայրաքաղաքների ավերակները:

– Իսկ Խոր Վիրապից կարծես ափի մեջ երևում է ավեհեր Մասիսը:

– Երկնքից առկախ մի լեռնակղզի՝

Հայաստան աշխարհ,

Երկնքից առկախ այդ լեռնակղզու

Ուիդիո կենտրոնում՝

Երկու զանգ հսկա և անձեռագործ.

Անունն Արարատ կամ Միս ու Մասիս:

– **Արմավիրի մարզ:** Մարզկենտրոնը՝ Արմավիր, քաղաքները՝ Վաղարշապատ, Մեծամոր:

– Արմավիրի մարզը Հայաստանի հնագույն մայրաքաղաքների օրրան է՝

Արմավիր, Վաղարշապատ, Երվանդաշատ:

– Երբ Հայաստանում պետական կրոն հայտարարվեց քրիստոնեությունը, 303 թ. Վաղարշապատում կառուցվեց Մայր տաճարը՝ Էջմիածինը:

– Գոյություն ունի Տաճարի անունը բացատրող մի ավանդություն: Գրիգոր Լուսավորիչը երագում տեսնում է Քրիստոսին, ով հրեղեն մուրճը ձեռքին իջնում է երկնքից և ցույց տալիս տաճարի կառուցման տեղը: Այստեղից էլ առաջացել է տաճարի անունը՝ Էջմիածին՝ իջավ Միածինը:

--Այսօր Էջմիածինը Ամենայն Հայոց Կաթողիկոսի աթոռանիստն է, հայ քրիստոնյաների հոգևոր կենտրոնը: Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսանել են Կոմիտասը, Ավ. Իսահակյանը և ուրիշներ:

– Վաղարշապատ քաղաքում են գտնվում հայ ճարտարապետության այնպիսի հրաշալի կոթողներ, ինչպիսիք են Հռիփսիմեի տաճարը, Սր. Գայանե վանքը, Զվարթնոցի ավերակները:

– **Գեղարքունիքի մարզ**, մարզկենտրոնը՝ Գավառ, քաղաքները՝ Սևան, Վարդենիս, Մարտունի:

– Երբ Սևանը դեռ չկար՝

Հայաստանի կյանքն էր քար,

Բայց հիմա էլ թե հանես

Մեր Սևանը, դուրս վանես,

Կչորանան բյուրավոր

Աղբյուրները մեր բոլոր,

Կչքանա, կպակսի

Անգամ ձյունը Մասիսի:

– Էն Լոռո ձորն է, որ հանդիպակաց,

Ժայռերը՝ խորունկ , նոթերը կիտած՝

Դեմ ու դեմ կանգնած, հանառ ու անքարթ

Հայացքով իրար նայում են հանդարտ:

– **Լոռու մարզ:** Մարզկենտրոնը՝ Վանաձոր, քաղաքները՝ Ստեփանավան, Տաշիր, Թումանյան, Սպիտակ:

– Լոռու մարզն աչքի է ընկնում պատմամշակութային հուշարձանների և՛ քաղաքապետությամբ, և՛ հնությամբ: Նշանավոր են Օձունի եկեղեցին, Հաղպատի և Մանասիների վանքերը:

– Լոռու մարզի Գսեղ գյուղում է ծնվել ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

– Ահա և հասանք մեզ:

– **Կոտայքի մարզ:** Մարզկենտրոնը՝ Հրազդան, քաղաքները՝ Արովյան, Չարենցավան, Եղվարդ, Ծաղկաձոր:

– Թեղենիս լեռան լանջերին փռված է Ծաղկաձորը՝ Ծաղկունյաց ձորը, որը եղել է Արշակունի քաղաքների ամառանոցը: Քաղաքը հիմա հանգստավայր է թե՛ ամռանը, թե՛ ձմռանը:

– Եթե դուրս նայենք պատուհանից, կտեսնենք մի լեռ, որի արքայավայել, գեղեցիկ տեսքը և անունը հիշեցնում են հայոց ամենագեղեցիկ արքա Արային:

– Այս մարզը հայտնի է Գառնիի ամրոցով և հեթանոսական տաճարով, Կեչառիսի և Գեղարդի վանքերով:

– **Շիրակի մարզ:** Մարզկենտրոնը՝ Գյումրին է, Լենինականը, ուր կլեսս քաղցրահնչյուն գյումրվա բարբառը:

– Այս մարզը գտնվում է Շիրակի դաշտում: Չմռանը այստեղ թեև ցուրտ է, բայց գյումրեցիների կատակները ջերմացնում են թե՛ բնիկների, թե՛ հյուրերի սրտերը:

– Շիրակի մարզի պատմաճարտարապետական հուշարձաններից են Հառիճավանքը և Մարմաշենի վանքը:

– Այստեղ են ծնվել հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազը և տխուր աչքերով մեծ դերասան Սիեր Սկրտչյանը:

– **Սյունիքի մարզ:** Մարզկենտրոնը՝ Կապան, քաղաքները՝ Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի: Մարզի տարածքում են գտնվում Տաթևի վանքը, Հալիձորի բերդը:

– **Վայոց ձորի մարզ:** Մարզկենտրոնը՝ Եղեգնաձոր, քաղաքները՝ Վայք, Ջերմուկ: Ջերմուկ քաղաքն աշխարհին հայտնի է իր հանքային, բուժիչ ջրերի մեծ պաշարով:

– Այստեղ են գտնվում պատմաճարտարապետական գոհարներից մի քանիսը՝ Նորավանքը, Գնդեվանքը:

– **Եվ վերջապես Տավուշի մարզ:** Մարզկենտրոնը՝ Իջևան, քաղաքները՝ Դիլիջան, Բերդ: Դիլիջանը Հայաստանի առողջարանային քաղաքներից է: Այս մարզը հայտնի է իր Պարզ լճով: Տավուշի մարզի զարդն են Հաղարծնի վանքը, Գոշավանքը:

– Ասում են Իջևանի շրջանի Ակնաղբյուր գյուղում դյուցազուն մի ծառ կա, որ կոչվում է Վարդան գորավարի կաղնի:

– Այն տնկել է Վարդան Մամիկոնյանը 450 քվին՝ Ավարայրի ճակատամարտից 1 տարի առաջ: Անցել է 1500 տարի, սակայն այդ կաղնին կանգուն է մինչ հիմա:

– **ԼՂՀ, Արցախ:**

Կյա՞նք ես ուզում տեսնել հողում,
Ուր ծաղիկներ կան շողշողուն,
Ուր գետակ է հանկարծ բխում,
Պետք է լինես Ղարաբաղում:
– Հացի համ ու հո՞տ ես ուզում,
Աղբյուրի մոտ քե՞ֆ ես ուզում,
Ընկերներիդ հավաքի՛ր, տա՛ր
ՈՒ քե՛ֆ արա Ղարաբաղում:

– Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կազմավորվել է 1991 թվականի սեպտեմբերի 2-ին: Դժվար է եղել Արցախ աշխարհի գոյատևման, կայացման և անկախ պետություն դառնալու պատմական ուղին:

– Լեռնային Ղարաբաղը կազմում է Հայաստանի մակերեսի 1/3-ը՝ 10 հազար քառակուսի կմ: Խոշոր գետերն են Թարթառը, Խաչենագետը:

– Մշակութային հուշարձաններից հիշատակելու են արժանի Ամարասը, Գանձասարը, Տիգրանակերտ մայրաքաղաքի պեղված ավերակները և Շուշվա բերդը:

– Օտարազգի ճարտարապետները Գանձասարի վանքային համալիրը կոչել են «հայ ճարտարապետության մարգարիտ»:

– Սիրելի՛ ուսուցիչներ, ահա՛ մեր հայրենիքը, Հայաստան աշխարհը:

– Հայրենիքը երգ է, որը ոչ քե մեր շուրթերն են երգում, այլ հոգին:

– Հայաստանը մեզ համար ծիրանի գույն և ծիրանի համ ունի:

– Հայը դարերով սիրով է պահել

Յոթ քանկ սրբություն՝

Գիրքը, Մասիսը, շինարար ոգին,

Հավատը, լեզուն:

Սուրբ անուններ են եղել դարերով

Հայ ընտանիքը,

Եվ ամենից վեր, ամենից լուսե՛

Մայր հայրենիքը:

Վերջում ամբողջ դասարանը կատարեց «Բարձրիկ Հայաստան» երգը:

Անահիտ Ավագյան

ք. Եղվարդի թիվ 3 հիմնական դպ. դասվար